

Ուսանողի ձեռնարկ

9

Հնագանդություն Մարդուն

Ենթարկվող վերաբերմունք մշակել
իշխանություն ունեցողների հանդեպ



Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

Հնագանդություն Մարդուն

Ենթարկվող վերաբերմունք մշակել
իշխանություն ունեցողների հանդեպ

Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Ուսանողի ձեռնարկ

5-րդ խմբագրում



Հնազանդությունն Մարդուն
Ուսանողի ձեռնարկ
5-րդ խմբագրում
Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Եթե այլ կերպ նշված չէ, աստվածաշնչյան բոլոր մեջբերումներն արված են Trinitarian Bible Society (Tyndale House, Dorset Road, London, SW19 3NN, England)-ի կողմից կատարված ժամանակակից թարգմանությունից:

Բոլոր իրավունքները, ներառյալ ներկայացնելու կամ որևէ ձևով՝ ամբողջական կամ մասնակի, վերատպելու, պաշտպանված է Համաշխարհային հեղինակային իրավունքի կոնվենցիայով և մյուս կոնվենցիաներով, պայմանագրերով ու հռչակագրերով:

Այս դասընթացը սկզբում լույս է տեսել անգլերեն, Obedience to Man, 5th edition վերնագրով:

Այս նյութը կարող է վերատպվել և բաժանվել, որպեսզի օգտագործվի Թին Չելենջի, նմանատիպ ծրագրերի, տեղական եկեղեցիների, դպրոցների, այլ կազմակերպությունների և անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Նրանք, ովքեր կցանկանան վաճառել այս նյութերը, պետք է գրավոր թույլտվություն ստանան Գլոբալ Թին Չելենջից:

Այս դասընթացը *Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար* դասընթացի մի մասն է, որը մշակվել է, որպեսզի օգտագործվի եկեղեցիներում, բանտային ծառայություններում, Թին Չելենջում և նմանատիպ ծառայություններում, որտեղ աշխատում են նորադարձ քրիստոնյաների հետ: Դասընթացի մեջ մտնում են՝ Ուսուցչի ձեռնարկը, Ուսանողի ձեռնարկը, Ուսուցման ուղեցույցը, Մտուգարքը և Վկայականը: Դրանց մասին առավել տեղեկություններ ստանալու համար դիմել:

Global Teen Challenge
PO Box 511
Columbus, GA, 31902 USA
Email: gtc@globaltc.org
Web: www.globaltc.org
www.iTeenChallenge.org



Բովանդակություն

Գլուխ 1. Հիմնական ճշմարտություններ քո առաջնորդներին հնազանդվելու համար.....	4
Ա. Կյանքի ի՞նչ փորձառություն ես դու ունեցել քո առաջնորդների հետ:	4
Բ. Ո՞ր առաջնորդներին դու պետք է հնազանդվես:	6
Գ. Զարգացրո՞ւ հնազանդ վերաբերմունքներ:	8
Դ. Մարդուն հնազանդվելը հիմնված է սիրո վրա:.....	14
Ե. Ուղեցույց՝ օգնելու քեզ՝ քո առաջնորդներին սիրով հնազանդվելու համար:	16
Գլուխ 2. Հնազանդության երեք մակարդակներ	19
Մակարդակ 1. Հնազանդվի՞ր, քանի որ քեզ ասել են, որ անես դա:	19
Մակարդակ 2. Հնազանդվի՞ր և պարզի՞ր հիմնական պատճառը, թե ինչու է քո առաջնորդը քեզ ասել, որ դա անես:	21
Մակարդակ 3. Հնազանդվի՞ր քո կամքով:	24
Գլուխ 3. Ինչպե՞ս պետք է արձագանքես քո առաջնորդի հետ խոսելիս.....	26
Ա. Մի՛ մեղադրիր կամ քննադատիր քո առաջնորդներին:	26
Բ. Քո պատասխանը հիմնավորի՞ր քո կարծիքի վրա:	27
Գ. Այնպե՛ս ասա, որ օգնես քո առաջնորդին՝ հասնել իր նպատակին:	27
Դ. Նպատակնե՛ր դիր, թե ինչպես ես արձագանքելու, երբ որոշակի խնդիրներ ի հայտ գան:	28
Ե. Ժամանակային սահմանափակո՞ւմ դիր, թե երբ ես խոսելու քո առաջնորդի հետ:	28
Զ. Աստճո՞ւն նայիր, որպեսզի զորություն ստանաս ճիշտն անելու համար: ..	28
Գլուխ 4. Ինչպե՞ս պետք է վարվես, երբ քո առաջնորդը քեզ ասում է, որ ինչ-որ սխալ բան անես:	31
Ա. Ուշադի՞ր եղիր, որ ճիշտ գնահատես, թե ինչ են քեզ ասել, որ անես:.....	31
Բ. Պարզի՞ր հիմնական պատճառը, թե ինչո՞ւ է քո առաջնորդը քեզ հանձնարարում, որ դա անես:	34
Գ. Եթե հիմնական պատճառը՝ թե ինչո՞ւ է քո առաջնորդը քեզ ասել, որ դա անես, քո օգուտի համար է (ոչ թե մեղք է), դու պարտավոր ես հնազանդվել:.....	35
Դ. Եթե քո առաջնորդի կողմից հանձնարարություն տալու հիմնական պատճառը քեզ մեղքի մեջ զցելն է, դու պարտավոր ես չհնազանդվել նրան:	36
Գլուխ 5. Քո առաջնորդներին հնազանդվելու և չհնազանդվելու հետևանքները.....	41
Ա. Քո առաջնորդներին հնազանդվելու հետևանքները:.....	41
Բ. Քո առաջնորդներին չհնազանդվելու հետևանքները:	44

Գլուխ 1.

Հիմնական ճշմարտություններ քո առաջնորդներին հնագանդվելու համար

Ա. Կյանքի ի՞նչ փորձառություն ես դու ունեցել քո առաջնորդների հետ:

Մեզնից ամեն մեկն իրական պատմություններ ունի առաջնորդների մասին, նաև՝ թե ինչպես են նրանք մաս կազմել մեր կյանքում: Դու, հնարավոր է, շատ դրական և քաջալերական պատմություններ ունենաս: Կամ էլ՝ քո առաջնորդների մասին հիշողություններդ կարող են բերել դեպքերի ցավոտ պատկերներ, որոնք խորը խոցում են մեզ:

Այս դասընթացը մենք ուզում ենք կառուցել անցյալի քո անձնական փորձառության վրա և ուշադիր նայել, թե ինչպես է Հիսուսն ուզում, որ արձագանքես քո առաջնորդներին: Հիմնական ճշմարտությունն այն է, որ Աստված ուզում է, որ դու հնագանդվես քո առաջնորդներին: Ուրեմն, ինչպիսի՞ փորձառություն ես ունեցել քո առաջնորդների հետ:

1. Հնագանդության թեման:

Մենք բոլորս էլ ինչ-որ չափով դժվարություններ ունեցել ենք անհնագանդության պատճառով: Մեզնից շատերի համար այս խնդիրները սկսվեցին, երբ մենք դեռ փոքր էինք: Նույնիսկ նախքան խոսել սովորելը մենք սովորեցինք ինչ-ինչ իրավիճակներում անհնագանդություն դրսևորել: Այդ վաղ ժամանակներից ի վեր մենք շարունակում ենք վարպետանալ անհնագանդության մեջ:

Շատերն իրենց պատանի տարիքում բազմաթիվ խնդիրներ են ունենում իրենց ծնողների և ավագների հետ: Շարունակական անհնագանդությունը հաճախ բերում է ցավալի հետևանքներ, և ինչքան շատ ենք մենք մեծանում, այնքան լուրջ են դառնում հետևանքները: Շատ պատանիներ այսօր նստած են բանտում իրենց անհնագանդության պատճառով:

2. Կոնֆլիկտ առաջնորդների հետ:

Քո առաջնորդների հետ ունեցած կոնֆլիկտներից քանի՞սն են կապված եղել անհնազանդության հետ: Հաճախ պատանհների և նրանց ծնողների միջև անհամաձայնությունները վերածվում են խոշոր կոնֆլիկտների, որոնցից շատերի կենտրոնում անհնազանդության հարցն է: Եթե այս կոնֆլիկտները չլուծվեն, կարող են առաջ բերել խախտված փոխհարաբերություններ:

Անհնազանդության մեկ քայլը հաճախ քեզ կարող է տանել անհնազանդության մեկ այլ քայլի: Հեշտ է ասելը. «Ես գիտեմ, թե ինչն է ինձ համար ամենալավը, և ոչ ոք չի կարող իմ միտքը փոխել»:

Կարող ես ունենալ ցավոտ հիշողություններ, երբ քո առաջնորդներից մեկը վատ է վերաբերվել քեզ հետ: Փաստը, որ որոշ առաջնորդներ անվստահելի են, չի նշանակում, որ դու կարող ես անտեսել նրանց բոլոր ասածները: Դու դեռես պատասխանատու ես՝ հնազանդվել նրանց այնպես, ինչպես Հիսուսը կաներ, եթե լիներ քո փոխարեն:

Եթե Աստված հեռացներ քո բոլոր անկատար առաջնորդներին, դու ոչ մի առաջնորդ չէիր ունենա: Իսկ երբ դու դառնայիր առաջնորդ, Աստված քեզ նույնպես ստիպված կլիներ հեռացնել:

Աստված Իր շնորհը տարածում է բոլորիս վրա: Աստվածաշնչի բոլոր համարները, որոնք խոսում են քո առաջնորդներին հնազանդվելու մասին, տրված են Աստծո կողմից: Նա գիտի, որ քո առաջնորդներից ոչ ոք կատարյալ չէ, բայց և այնպես Նա շարունակում է քեզ ասել, որ հնազանդվես քո առաջնորդներին:

3. Անհնազանդության սովորությունը:

Անհնազանդությունը կարող է այնքան սովորական մաս դառնալ մեր առօրյայում, որ անգամ չմտածենք էլ այդ մասին: Երբ դու շարունակես անհնազանդության ճանապարհը, այն կդառնա առաջնորդներին արձագանքելու քո սովորական ձևը, ավելի շուտ՝ որպես սովորություն, քան քո առաջնորդներին հակառակվելու գիտակցական ջանք: Վատ սովորությունները հեշտությամբ կարող են արմատանալ մեր կյանքում:

Հաճախ մեր առաջնորդները դաստիարակչական տարբեր մեթոդներ են օգտագործում, որպեսզի մեզ ստիպեն փոխվել: Երբեմն այս դաստիարակությունը գործում է՝ բերելով փոփոխություններ, իսկ երբեմն էլ՝ ոչ:

Ուրեմն, ո՞ւր ենք մենք գնում այստեղից: Աստված քեզ չի դրել երկրի վրա, որ ուղղես քո առաջնորդների կյանքի բոլոր խնդիրները: Սակայն Աստված շատ է ուզում, որ դու սովորես՝ ինչպես հնազանդվել քո անկատար առաջնորդներին Աստծուն պատիվ բերող ձևով:

Այս դասընթացը պարունակում է որոշակի դժվարին ուսուցումներ: Դրանցից շատերը կարող են հակառակ լինել հնազանդության և առաջնորդների մասին քո ունեցած պատկերացումներին: Աստվածաշունչը խոսում է փոփոխությունների մասին, որոնք պետք է տեղի ունենան, երբ մենք ընդունենք Հիսուսին մեր կյանքում: Եփեսացիներին 4:17-32-ը խոսում է հին կենսակերպը հանելու և նոր կենսակերպ հագնելու մասին:

Այս դասընթացը քեզ բազմաթիվ հնարավորություններ է տալիս քո անցյալի հին սովորություններից ու վերաբերմունքներից ձերբազատվելու և նորերը զարգացնելու վերաբերյալ, որոնք պատիվ կբերեն Հիսուսին: Այդ ամենն Աստծո ուզած ձևով անելը լավագույն ուղին է քո կյանքի մնացած մասի համար:

4. Ինչքանո՞վ է Աստված համապատասխանում քո կյանքին:

Աստծո հետ ունեցած քո փոխհարաբերությունները մեծ ազդեցություն կունենան այն բանի վրա, թե ինչպես սովորես հնազանդվել քո առաջնորդներին:

Բայց և այնպես, եթե դու քո կյանքը տվել ես Հիսուսին և Նրան դարձրել քո կյանքի Առաջնորդը, ուրեմն դու մի ուղու վրա ես, որը բավականին կհեշտացնի քո երկրավոր առաջնորդներին հնազանդվելը: Աստված կարող է քեզ զորություն տալ փոխվելու, որպեսզի դու կարողանաս սովորել ինչպես հնազանդվել քո առաջնորդներին Աստծուն պատիվ բերող ձևով:

Բ. Ո՞ր առաջնորդներին դու պետք է հնազանդվես:

Հռոմեացիներին 13:1-7-ում Աստված հստակորեն ասում է, որ Նա մարդկանց է դրել որպես քո առաջնորդներ: Աստված ասում է, որ դու պետք է հնազանդվես նրանց: Երբ դու անհնազանդ ես լինում քո առաջնորդներին, գործում ես նաև ընդդեմ Աստծո: Դու անձնական պատասխանատվություն ունես հնազանդվելու նրանց, ովքեր քեզ վրա իշխանություն ունեն:

1. Կառավարության մեջ եղած իշխանավորները:

Դու պետք է հնազանդվես քո կառավարության մեջ եղած իշխանավորներին՝ սկսած երկրի նախագահից մինչև տեղական կառավարման մարմինները՝ ներառյալ երկրի բոլոր մարզային, համայնքային և տարածքային ինքնակառավարման մարմինները: Դու պետք է հնազանդվես բոլոր այն տղամարդկանց ու կանանց, ովքեր աշխատում են այս մարդկանց համար, օրինակ՝ ոստիկաններին: Դու պետք է նաև հնազանդվես օրենքներին, որ ընդունել են այս կառավարության իշխանավորները:

Հոմեագիներին 13:1-2.

«Թող ամեն մարդ բարձր իշխանություններին հնազանդ լինի: Որովհետև չկա իշխանություն, որ Աստուծուց չլինի, և եղած իշխանություններն Աստուծուց են կարգված: Հետևաբար, ով հակառակում է իշխանությանը, Աստուծո հրամանին է հակառակում. և նրանք, որ հակառակում են, իրենց վրա դատապարտություն պիտի ընդունեն»:

Ա Պետրոս 2:13-14.

«Ուստի՝ հանուն Տիրոջ, հնազանդ եղեք մարդկային բոլոր օրենքներին. թե՛ թագավորին՝ որպես գերագույն մեկի, թե՛ կուսակալներին՝ որպես նրա կողմից չարագործներին պատժելու և բարին գործողներին գովելու համար ուղարկվածների»:

Եթե քեզ դատարանն է տեղավորել Թին Չելենջի կենտրոններից մեկում, դու պարտավոր ես հնազանդվել դատավորին և պայմանական ազատության քո հսկիչին:

2. Ծնողներ:

Աստվածաշունչը շատ հստակ նշում է, որ երեխաները պետք է հնազանդվեն իրենց ծնողներին: Տե՛ս Եփեսացիներին 6:1-3 և Ելից 20:12: Աստվածաշունչը չի առանձնացնում՝ ճշմարիտ քրիստոնյանե՞ր են քո ծնողները, թե՞ ոչ: Դու պետք է հնազանդվես նրանց, եթե անգամ նրանք ճշմարիտ քրիստոնյաներ չեն: Աստված է քեզ տվել ծնողներ, այնպես որ պատվի՛ր նրանց, հարգի՛ր նրանց, սիրի՛ր նրանց և հնազանդվի՛ր նրանց:

Եփեսացիներին 6:1-3.

«Զավակնե՛ր, ձեր ծնողներին հնազանդ եղեք Տիրոջով, որովհետև դա է ճիշտը. «Պատվի՛ր քո հորն ու մորը», սա առաջին պատվիրանն է, որ խոստում ունի՝ «որպեսզի լավ լինի քեզ համար, և երկար կյանք ունենաս երկրի վրա»:

3. Գործատու:

Եթե աշխատանք ունես, ուրեմն պատասխանատվություն ունես ենթարկվելու քո գործատուին, այն անձնավորությանը, ում մոտ դու աշխատում ես: Քանի դեռ աշխատում ես նրա մոտ, դու պարտավոր ես հնազանդվել նրան:

Չորրորդ գլխում մենք մանրամասնորեն կխոսենք, թե ինչ պետք է անես դու, եթե քո ղեկավարը քեզ հանձնարարում է անել մի բան, որը, ըստ քեզ, սխալ է: Բայց և այնպես, մեծ մասամբ, մեր ղեկավարները մեզ հանձնարարում են կատարել աշխատանքներ, որոնք սխալ չեն:

4. Հոգևոր առաջնորդներ. հովիվ:

Որպես նորադարձ քրիստոնյա՝ շատ կարևոր է, որ դու ներգրավված լինես որևէ տեղական եկեղեցու մեջ և անդամակցես դրան: Դու պետք է հնագանդվես այնտեղի հոգևոր առաջնորդներին, ինչպիսին են՝ հովիվը կամ նրա օգնականները: Եթե դասավանդում ես քո եկեղեցու դպրոցում, դու, միևնույն ժամանակ, պատասխանատվություն ունես հնագանդվելու քո եկեղեցու ուսումնական ծրագրի պատասխանատուին:

5. Քո այժմյան բնակավայրի ղեկավարները:

Եթե այժմ ապրում ես քո տնից հեռու մի տեղ, դու պատասխանատվություն ունես հնագանդվելու քո այդ բնակավայրի ղեկավարներին: Որոշների համար դա կարող է լինել Թին Չելենջի կենտրոնը, ուսումնական հանրակացարանը կամ նմանատիպ այլ վայր: Երբ դու եկար այդ վայրը, հնարավոր է՝ քեզ խնդրեցին ստորագրել այդ վայրի առաջնորդներին և կանոններին հնագանդվելու համաձայնագիր: Քանի դեռ դու այդտեղ ես, պարտավոր ես ենթարկվել այդտեղի քո ղեկավարներին՝ ներառյալ տնօրենին, ղեկանին, ուսուցիչներին կամ աշխատակազմից որևէ մեկին:

Քո առաջնորդներին հնագանդվել սովորելու գաղտնիքներից մեկն Աստծուն վստահելն է, որ Նա կարող է ցանկացած առաջնորդի օգտագործել քո կյանքում: Դու կարող ես վստահել Աստծուն և համոզված լինել, որ Նա կօգտագործի քո առաջնորդներին՝ անելու այն բոլոր լավ բաները, որոնք Նա ծրագրել է քո կյանքի համար: Աստծուն վստահելն այստեղ առանցքային է: Աստված կարող է գործել քո բոլոր առաջնորդների միջոցով, անգամ նրանց, ովքեր կատարյալ չեն:

Հիմա, երբ մենք հասկացանք, թե որ առաջնորդներին պետք է հնագանդվենք, ե՛կ դիտարկենք, թե ինչպես կարող ենք սովորել հնագանդվել մեր առաջնորդներին: Մեր առաջնորդներին հնագանդվելու հետ կապված հիմնական պայքարները կապ ունեն մեր իսկ վերաբերմունքների հետ:

Գ. Զարգացրո՛ւ հնագանդ վերաբերմունքներ:

Քո առաջնորդներին հնագանդվել սովորելու հարցում կարևոր քայլերից մեկը հնագանդ վերաբերմունքներ զարգացնելն է: Մրանք կարող են շատ տարբեր լինել այն անհնագանդ վերաբերմունքներից, որոնք տարիներ շարունակ մաս են կազմել քո կյանքում:

Ահա մի քանի անհնագանդ վերաբերմունքներ, որոնք դյուրին միջոց են դառնում քո առաջնորդներին չհնագանդվելու համար: Դու կարող ես մի քանի բոլոր հատկացնել՝ քո կյանքը ինքնուրույն գնահատելու նպատակով: Գնահատի՛ր ինքդ քեզ՝ օգտագործելով 1-10 սանդղակը յուրաքանչյուր վերաբերմունքի համար,

որտեղ «10»-ը կնշանակի, որ այդ վերաբերմունքը մեծ տեղ ունի քո կյանքում, իսկ «1»-ը կնշանակի, որ դու գրեթե երբեք այդ վերաբերմունքով չես արձագանքում:

___ Դատապարտող վերաբերմունք (քննադատող վերաբերմունք):

___ Ըմբոստ վերաբերմունք:

___ Երախտամոռ վերաբերմունք:

___ Ծույլ վերաբերմունք:

___ Նեղացկոտ վերաբերմունք:

___ Կամակոր վերաբերմունք:

Մեր վերաբերմունքները մեծ ազդեցություն են ունենում մեր վարքի վրա: Եթե դու ունես այս անհնազանդ վերաբերմունքներից որևէ մեկը, դրանք սովորաբար հանկարծակի դուրս են թռչում, երբ դու հայտնվում ես դժվար իրավիճակում քո առաջնորդներից որևէ մեկի հետ: Եթե դու այս անհնազանդ վերաբերմունքներին թույլ տաս կառավարել քո կյանքը, ապա անհնազանդ արարքները կդառնան քո կյանքի առօրյայի մի մասը:

Երբ դու ճշմարիտ քրիստոնյա դառնալու որոշում ես կայացնում, քո կյանքի ամենամեծ ասպարեզներից մեկը, որը կարիք ունի փոփոխության, քո վերաբերմունքներն են: Հիսուսն ուզում է, որ դու սովորես հնազանդվել Իրեն և հնազանդվել քո առաջնորդներին: Հնազանդ վերաբերմունքներ ունենալը կենտրոնական դեր է կատարում քո վարքի փոփոխության հարցում:

Փիլիպպեցիներին 2:5-ը մեզ ասում է. «Նույն միտքը թող լինի ձեր մեջ, ինչ Հիսուս Քրիստոսի մեջ էր»: Ուրեմն, ինչպիսի՞ վերաբերմունքներ ունեն Հիսուսն իշխանավորների հանդեպ, երբ այստեղ էր՝ երկրի վրա: Ուշադրություն դարձնենք այն չորս հնազանդ վերաբերմունքներին, որոնք մենք կարիք ունենք զարգացնելու:

1. Հարգալից վերաբերմունք:

Ա. Ի՞նչ է հարգալից վերաբերմունքը:

Առաջնորդին հարգանք ցույց տալ նշանակում է՝ պատիվ տալ նրան: Քո առաջնորդի հանդեպ հարգալից վերաբերմունք ունենալը նշանակում է, որ դու բարի և քաղաքավարի կլինես տվյալ անձնավորության հանդեպ:

Բ. Ինչպե՞ս կարող ես զարգացնել հարգալից վերաբերմունք:

Քո առաջնորդների հանդեպ հարգալից վերաբերմունք զարգացնելու ամենաարդյունավետ ձևերից մեկն այն է, որ հասկանաս, որ Աստված գործում է քո կյանքի մեջ քո առաջնորդների միջոցով:

Դու պետք է տեսնես, որ Աստված օգտագործում է քո առաջնորդներին՝ քեզ Աստծո ուզած մարդը դարձնելու նպատակով: Դու պետք է քո առաջնորդներին նայես որպես «Աստծո ձեռքերի», որոնք առաջնորդում ու ուղղորդում են քեզ:

Երբ քո առաջնորդներին նայում ես որպես Աստծո ներկայացուցիչների, դու կարող ես վստահել Աստծուն, որ Նա կօգտագործի այդ առաջնորդներին քեզ օգնելու համար: Դու պետք է հարգես քո առաջնորդներին ոչ թե այն բանի համար, որ նրանք արժանի են հարգանքի, այլ որ Աստված է արժանի քո հարգանքին: Երբ հարգում ես քո առաջնորդներին, դու իրականում Աստծուն ցույց ես տալիս, որ հարգում ես Իրեն:

2. Ենթարկվող վերաբերմունք:

Ա. Ի՞նչ է ենթարկվող վերաբերմունքը:

Դրա հակառակը մեզնից շատերի համար հեշտ է ճանաչելը: Քանի անգամ ես ինքդ քեզ ասել. «Ոչ ոք չի կարող ինձ ասել, թե ինչ պետք է անեմ»: Հեշտ է դեմ կանգնել այն մարդկանց, ովքեր իշխանություն ունեն քեզ վրա, հատկապես երբ նրանք կոշտ ու կոպիտ են: Սակայն անկախ լինելու այս վերաբերմունքը պետք է բերել հսկողության տակ:

Ենթարկվող վերաբերմունք ունենալ նշանակում է՝ հասկանալ, որ դու չես քո դեկավարը: Դու գիտակցում ես, որ քո առաջնորդներին հնազանդվելով իրականում Աստծուն ես հնազանդվում: Տե՛ս Կողոսացիներին 3:23-ը: Երբ գործադրում ես ենթարկվող վերաբերմունք, դու դրանով ցույց ես տալիս, որ քո արարքների մեջ ամենից առավել հետաքրքրված ես Աստծո զովասանքով: Քո առաջնորդներին հնազանդվելն այդ ձևերից մեկն է:

Եթե ենթարկվող վերաբերմունք ունես, դու ասում ես. «Ես *ուզում եմ* հնազանդվել իմ առաջնորդին»: Դու որոշում ես տվյալ անձնավորությանն ընդունել որպես քո առաջնորդ և պատրաստակամորեն թույլ ես տալիս նրան՝ քո առաջնորդը լինելու պատասխանատվություն վերցնել: Դու համաձայնվում ես, որ կանոնները քո կյանքի կարևոր մասն են կազմում, և համաձայնվում ես հնազանդվել քո առաջնորդի սահմանած կանոններին:

Եթե դու ուզում ես կանոններին ու օրենքներին հնազանդվելու մեծ օրինակ տեսնել, ապա կարդա՛ Սաղմոս 119-ը: Սա Աստվածաշնչի ամենաերկար գլուխն է, և այս գլխի ամենամեծ թեմաներից մեկը սերն ու հարգանքն է Աստծո տված օրենքների հանդեպ:

Բ. Ինչպե՞ս կարող ես ենթարկվող վերաբերմունք զարգացնել:

Դու ենթարկվող վերաբերմունք կարող ես զարգացնել ինքդ քեզ ասելով.
«Ես որոշում եմ ինքս ինձ ենթարկել իմ առաջնորդներին և հնազանդվել նրանց»:
Դու որոշում ես ինքդ քեզ դնել քո առաջնորդների պաշտպանության ներքո:

Ասա՛ ինքդ քեզ. «Ես վստահում եմ Աստծո պաշտպանությանը, երբ ենթարկվում եմ իմ առաջնորդներին»: Եթե դու ամուր բռնել ես Հիսուսի ձեռքը, ապա կարող ես խաղաղություն ունենալ քո սրտում, որ Նա կօգնի քեզ ցանկացած իրավիճակում:

Դու փորձում ես գտնել միջոցներ, որպեսզի ցույց տաս քո առաջնորդին հնազանդվելու քո պատրաստակամությունը: Դու որոշում ես իրական ուրախություն գտնել քո առաջնորդներին հնազանդվելու մեջ՝ իմանալով, որ դա այն է, ինչ Աստված ուզում է, որ անես:

Մեկ այլ ռազմավարություն, որ կարող է քեզ օգնել ենթարկվող վերաբերմունք զարգացնելու համար, ինքդ քեզ հարցնելն է. «Եթե ես առաջնորդ լինեի, ինչպե՞ս կիմանայի, որ այս անձնավորությունը ենթարկվող վերաբերմունք ունի իմ՝ որպես իր առաջնորդի հանդեպ»:

Մի՛ փորձիր անել քո առաջնորդի գործը: Մի՛ գողացիր նրա առաջնորդական պատասխանատվությունները: Թող նա առաջնորդի: Դու կարիք ունես հնազանդության վրա կենտրոնանալու, ոչ թե քննադատելու նրա ընդունած յուրաքանչյուր որոշում:

Քո բոլոր ակնկալիքները թող Աստծուց լինեն: Գրի՛ր, թե ինչ ես ակնկալում, որ քո առաջնորդներն անեն քեզ համար, իսկ հետո աղոթի՛ր և այդ ակնկալիքները հանձնի՛ր Աստծուն: Եթե դու ապավինում ես Աստծուն, Նա քեզ կտա այն, ինչի կարիքը որ ունես:

3. Երախտապարտ (շնորհակալ) վերաբերմունք:

Ա. Ի՞նչ է երախտապարտ վերաբերմունքը:

Երախտապարտ վերաբերմունքն Աստծուց շնորհակալ լինելն է այն առաջնորդների համար, որ Նա տվել է քեզ:

Երբ դու երախտապարտ վերաբերմունք ես ունենում, անկեղծորեն ուրախ ես լինում և գնահատում ես այն ամենը, ինչ քո առաջնորդներն անում են: Դու գիտակցում ես, որ Աստված օգտագործում է նրանց՝ դարձնելու համար քեզ այնպիսին, ինչպիսին Աստված է ուզում, որ լինես:

Բ. Ինչպե՞ս կարող ես երախտապարտ վերաբերմունք զարգացնել:

Դու երախտապարտ վերաբերմունք կարող ես զարգացնել՝ որոշելով ուրախ լինել քո ունեցած առաջնորդների համար և նրանց համար ամեն օր Աստծուն շնորհակալություն հայտնելով:

Ա Թեսաղոնիկեցիներին 5:18.

«Ամեն ինչում գոհությո՛ւն մատուցեք, որովհետև սա է Աստծո կամքը ձեզ համար Քրիստոս Հիսուսով»:

Ամեն օր անկեղծ գնահատա՛նք ցույց տուր քո առաջնորդներին: Շնորհակալությո՛ւն հայտնիր նրանց, երբ քեզ խորհուրդ են տալիս կամ ուղղում:

4. Լուռ վերաբերմունք:

Ա. Ի՞նչ է լուռ վերաբերմունքը:

Այս մեկը շատ պարզ է. սովորի՛ր լուռ լինել: Դու պետք է սովորես լուռ լինել երկու իմաստով. 1) ինչքա՛ն խոսել, և 2) ինչքա՛ն բարձր խոսել:

Դա նաև ներառում է սովորելը, այն է՝ լինել լուռ **ներքուստ**, ինչպես նաև՝ **արտաքուստ**: Ինչքան հաճախ ես դու լսում, որ ինչ-որ մեկն ասում է. «Ես այնքան նյարդայնացած եմ»: Նյարդայնացած լինելը նշան է, որ լուռ վերաբերմունք չունես: Դու պետք է սովորես լռեցնել քո մտքերն ու զգացմունքները:

Լուռ վերաբերմունք ունենալ նշանակում է՝ խաղաղության մեջ լինել քո առաջնորդների հետ:

Ա Պետրոս 3:4.

«Այլ թող լինի սրտի ներսում թաքնված մարդը, հեզ ու հանդարտ հոգու անեղծանելի զարդով, որ Աստծո առաջ խիստ պատվական է»:

Այս համարը գրված է կանանց համար՝ իրենց ամուսինների հանդեպ նրանց վերաբերմունքի վերաբերյալ: Բայց և այնպես, այս սկզբունքը օգտակար է նաև յուրաքանչյուրի համար: Մենք բոլորս կարիք ունենք հանդարտ ու լուռ վերաբերմունք զարգացնելու: Աստծո առաջ սա խիստ պատվական է: Եթե Աստված ասում է, որ սա պատվական է Իր համար, ուրեմն մենք էլ նույն արժեքը պետք է տանք դրան մեր կյանքում:

Բ. Ինչպե՞ս կարող ես լուռ վերաբերմունք զարգացնել:

Դու կարող ես լուռ վերաբերմունք զարգացնել քո առաջնորդներին հնազանդվելով՝ առանց նրանց հակաճառելու: Պատրաստակա՛մ եղի՛ր հնազանդվել պարզապես այն պատճառով, որ քեզ ասել են, որ դա անես:

Վստահի՛ր Աստծուն: Նա կկարողանա գործել քո անկատար առաջնորդների միջոցով՝ քո կյանքում Իր ուզածն անելու համար: Վստահի՛ր Աստծուն որևէ բան անելիս այն ժամանակ, երբ դու գիտես, որ քո առաջնորդները գործի մեջ թերանում են քո վերաբերմամբ կամ ինչ-որ բան սխալ են անում:

Մի՛ վիճաբանիր քո առաջնորդների հետ: Նախքան հնազանդվելը բացատրություն մի՛ պահանջիր, թե ինչու պետք է տվյալ գործը կամ հանձնարարությունն անես:

Ամփոփում

Հիսուսի կյանքն ուսումնասիրելիս դու կտեսնես, որ Նա զարգացրել էր այս բոլոր հնազանդ վերաբերմունքներն Իր կյանքում: Նա ցույց տվեց այս վերաբերմունքներն Իր առաջնորդների հետ, ինչպես նաև Աստծո հետ Իր փոխհարաբերությունների ժամանակ:

Նշված բոլոր չորս հնազանդ վերաբերմունքներն էլ դժվար է զարգացնել: Սակայն Աստված խոստանում է օգնել, եթե մենք դիմենք Իրեն: Մի կարևոր քայլ, որն իրոք օգնում է հնազանդ վերաբերմունքները զարգացնելու հարցում, դրանք առաջնորդի հետ ընկերության հիմքի վրա կառուցելն է:

Բայց և այնպես, քո կյանքում այս հնազանդ վերաբերմունքները կառուցելու համար լավագույն հիմքը Աստծո հետ քո փոխհարաբերություններն են: Աստծո՝ սեր լինելը լավագույն պատճառն է քո առաջնորդների հանդեպ հնազանդ վերաբերմունքներ զարգացնելու համար:

Բոլոր հնազանդ վերաբերմունքները զարգանում են քո մտքում, երբ դու որոշում ես կայացնում: Դու որոշում ես այս վերաբերմունքները քո մտածելակերպի կարևոր մասը դարձնել, երբ հարցը վերաբերում է քո առաջնորդներին: Այս վերաբերմունքները քո կյանքում զարգացնելով՝ դու կտեսնես, որ քո առաջնորդներին հնազանդվելը քեզ համար շատ ավելի հեշտացել է:

Դ. Մարդուն հնազանդվելը հիմնված է սիրո վրա:

Քո սրտի խորքում տեղի ունեցածը մեծ ազդեցություն ունի այն բանի վրա, թե ինչքան հեշտությամբ կամ դժվարությամբ դու կհնազանդվես քո առաջնորդին: Ինքդ քեզ տո՛ւր այս հարցը. «Ո՞րն է իմ առաջնորդներին հնազանդվելու իմ հիմնական դրդապատճառը»:

- *Պատժվելու վա՞խը:*
- *Քո առաջնորդի աչքը մտնե՞լը:*
«Եթե ես այսօր իմ մորը հնազանդվեմ, հնարավոր է՝ երեկոյան կարողանամ դրսում ավելի երկար մնալ ընկերներիս հետ»:
- *Մեղավորության զգացողություն չե՞լ:*
Հնարավոր է՝ դու ինչ-որ սխալ բան ես արել և հիմա ուզում ես հնազանդվել այն հույսով, որ եթե բռնվես, քեզ հետ ավելի մեղմ կվերաբերվեն:
- *Մե՞քք:*
Այս դրդապատճառը լավագույնն է՝ քեզ հնազանդության ուղու վրա պահելու համար:

Աստծուն հնազանդվելը հիմնված է սիրո վրա. սա լավագույնն է, որի վրա դու կարող ես կառուցել քո կյանքը: Նույնը ճիշտ է նաև քո առաջնորդներին հնազանդվելու հարցում: Դու կարող ես հնազանդվել՝ ելնելով վախից, պարտականության զգացումից, կամ ստիպված լինելով: Սակայն քո առաջնորդներին հնազանդվելու լավագույն դրդապատճառը սերն է: Սերը հնազանդության բանալին է:

Եթե սովորես սիրել նրանց, ովքեր իշխանություն ունեն քեզ վրա, դու կկարողանաս հնազանդվել նրանց: Կարող է անհնարին թվալ՝ սիրել քո առաջնորդներին: Սակայն ոչ մի բան անհնարին չէ Աստծո համար: Նա կարող է քեզ սեր տալ քո առաջնորդների հանդեպ:

Եթե սերը լինի քո դրդապատճառը, քեզ համար ավելի հեշտ կլինի դեմ կանգնել քո առաջնորդներին չհնազանդվելու փորձություններին: Սակայն առաջնորդներին սիրելը սկսվում է որոշումից. դու ուզո՞ւմ ես անձնական փոխհարաբերություններ զարգացնել քո առաջնորդների հետ: Դու ուզո՞ւմ ես սովորել սիրել նրանց:

1. Աստված քեզ ասել է, որ սիրես մարդկանց այնպես, ինչպես ինքդ քեզ ես սիրում:

Հիսուսն ասաց, որ մարդկանց սիրելն Աստծո երկրորդ մեծագույն պատվիրանն է: Աստծուն սիրելը միակ բանն է, որ դրանից ավելի կարևոր է: Աստված պատվիրել է՝ սիրել իշխանավորներին: Երբ հնազանդվես այս օրենքին, դու ի վիճակի կլինես հնազանդվել այն բոլոր կանոններին, որոնք այս մարդիկ տալիս ես քեզ: Տե՛ս Մատթեոս 22:39 և Մարկոս 12:31:

2. Հիսուսը քեզ ասել է՝ սիրել մարդկանց այնպես, ինչպես Ինքն է սիրում քեզ:

Հովհաննես 13:34-ը և Հովհաննես 15:12-ը շատ պարզ ներկայացնում են այս միտքը: Դու պետք է սիրես քո իշխանավորներին այնպես, ինչպես Աստված է քեզ սիրում: Դու Աստծո կարիքն ունես դա անելու համար:

Հովհաննես 13:34.

«Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, որ դուք միմյանց սիրեք. ինչպես Ես ձեզ սիրեցի, դուք էլ նույնպես միմյանց սիրեք»:

Հովհաննես 15:12.

«Մա է Իմ պատվիրանը, որ դուք միմյանց սիրեք, ինչպես Ես ձեզ սիրեցի»:

Հիսուսը քեզ չի ասում կատարել մի բան, որն անհնարին է քեզ համար: Եվ Նա խոստացել է մեզ օգնել, երբ մենք անկարող ենք:

3. Եթե դու չսիրես քո առաջնորդներին, չես կարողանա հնազանդվել նրանց:

Իշխանություն ունեցող որոշ մարդկանց հեշտ է հնազանդվել, մինչդեռ մյուսներին՝ դժվար: Եթե դու ուզում ես մշտապես հնազանդ լինել քո երկրավոր ղեկավարներին ու Աստծուն, ուրեմն պետք է սովորես սիրել բոլոր նրանց, ովքեր քո հանդեպ իշխանություն ունեն: Սիրո փոխհարաբերությունը շատ ավելի է հեշտացնում հնազանդվելը:

Եթե դու ատում ես քո իշխանավորներին, քեզ համար շատ դժվար կլինի նրանց հնազանդվել: Հնազանդությունը սերտորեն կապված է վստահության հետ: Եթե դու վստահես քո հանդեպ իշխանություն ունեցողներին, կկարողանաս հնազանդվել նրանց՝ համոզված լինելով, որ նրանք գիտեն, թե ինչն է քեզ համար լավագույնը: Եթե դու ատում ես քո առաջնորդներին, շատ կդժվարանաս վստահել նրանց: Աստծուն հնազանդվելու սկզբունքները կիրառելի են նաև մեր երկրավոր առաջնորդների առումով: Տե՛ս Հովհաննես 15:10 և Հովհաննես 14:21,23,24:

Ե. Ուղեցույց՝ օգնելու քեզ՝ քո առաջնորդներին սիրով հնագանդվելու համար:

Եղե՞լ են ժամանակներ, երբ դու դժվարացել ես հնագանդվել ճողոպտի կամ քեզ վրա իշխանություն ունեցողներին: Եղե՞լ են դեպքեր, երբ դու ասել ես. «Ես գիտեմ՝ նրանք չեն հասկանում ինձ»: Իսկ գուցե դու չես հասկանում նրանց: Դիտարկենք մի քանի մոտեցումներ, որոնք մեզ կօգնեն հասկանալ նրանց, ովքեր իշխանություն ունեն մեզ վրա:

1. Սովորի՛ր հարգել քեզ վրա իշխանություն ունեցողին, եթե անգամ նա սխալ է:

Մենք բոլորս էլ սխալներ թույլ ենք տալիս: Մենք բոլորս էլ ունենք սխալներ, թերություններ, թույլ տեղեր և խնդիրներ: Քո առաջնորդները նույնպես կատարյալ չեն: Սակայն հարգի՛ր նրանց՝ անկախ նրանց թերություններից: Եթե հարգես միայն անսխալներին, դու, ի վերջո, ոչ մեկին էլ չես հարգի: Դու ես որոշում հարգել քո առաջնորդներին: Դու քեզնից բացի ոչ մեկին չես կարող մեղադրել քո հարգանքի բացակայության համար: Ա Պետրոս 2:17-ում Աստված մեզ պատվիրում է պատշաճ հարգանք ցույց տալ մարդկանց հանդեպ:

Ա Պետրոս 2:17.

«Պատվեցե՛ք բոլորին, սիրեցե՛ք եղբայրությունը, վախեցե՛ք Աստծուց, հարգեցե՛ք թագավորին»:

Եթե չհարգես քո առաջնորդներին, դու կդժվարանաս հասկանալ և սիրել նրանց: Դու նաև կդժվարանաս հնագանդվել նրանց:

2. Աստված օգտագործում է քո առաջնորդներին՝ քեզ ուղղորդելու և պաշտպանելու համար:


Հռոմեացիներին 13:1-2-ը շատ հստակ ասում է, որ Աստված է թույլ տվել քո առաջնորդներին, որ իշխանություն ունենան քեզ վրա: Աստված այս առաջնորդներին կարգել է քեզ վրա, որպեսզի նրանք ուղղորդեն, օգնեն ու պաշտպանեն քեզ: Նրանք «Աստծո ձեռքերն» են, որոնք քեզ պատրաստում են դառնալ Աստծո ուզած անձնավորությունը: Աստված քո առաջնորդներին շատ պարտականություններ է տվել, որոնք ուղղակիորեն վերաբերում են քեզ: Քանի դեռ հնագանդվում ես Աստծուն ու քո առաջնորդներին, դու կմնաս նրանց պաշտպանության ներքո: Աստված կօգտագործի քո առաջնորդներին՝ քո կյանքի ընթացքում քեզ առաջնորդելու համար:

Երբայեցիներին 13:7.

«Հիշեցե՛ք ձեր առաջնորդներին, որոնք Աստծո Խոսքը բերեցին ձեզ. նրանց վարքի արդյունքը տեսնելով՝ նրանց հավատին հետևեցե՛ք»:

Երբ դու որոշում ես հնազանդվել քո առաջնորդներին, Աստված ասում է, որ դու նրանց (միաժամանակ նաև՝ Իր) պաշտպանության տակ ես: Դա նման է անձրևոտ օրը հովանոցի տակ կանգնելուն: Երբ դու հնազանդվում ես քո առաջնորդներին, դա նման է նրանց հովանոցի տակ կանգնելուն: Քանի դեռ հնազանդվում ես, դու չես թրջվի, սակայն եթե որոշես առաջ գնալ քո սրտի կամակորուքամբ, դու դուրս կգաս նրանց պաշտպանության տակից:

Մեկ այլ պատկերազարդում, որը կօգնի հասկանալ, թե ինչպես է Աստված օգտագործում քո առաջնորդներին, մուրձի և հատիչի օրինակն է՝ գեղեցիկ ադամանդ պատրաստելու համար: Աստված մեր առաջնորդներին օգտագործում է մուրձի և հատիչի նման՝ մեր կյանքի անհնազանդ ասպարեզներից մեզ ազատելու համար: Երբ որ դու թույլ տաս, որ այս գործընթացը շարունակվի, ապա կբացահայտվի այն ներքին գեղեցկությունը, որն Աստված է ներդրել քո մեջ: Հնազանդությունը ճիշտ ուղին է դառնալու ճիշտ Աստծո ուզածի պես:



3. Իսկ ի՞նչ անել, եթե դու չես վստահում քո առաջնորդին:

Քանի անգամ ես դու ասել. «Ես չեմ վստահում իմ ծնողներին», կամ՝ «Ես չեմ վստահում այդ առաջնորդին»: Շատ անգամ այն անձնավորությունը, ով այսպես է մտածում, իր վրա է վերցնում մի պատասխանատվություն, որն իրեն տրված չէ:

Սովորաբար այդպիսի անձնավորությունն իրավունք է ստանձնել՝ գնահատել իր վրա իշխանություն ունեցող առաջնորդին, ստուգել՝ տեսնելու, թե ինչպես է առաջնորդներից յուրաքանչյուրն իր գործն անում: Եթե դու երբևէ այսպես ես վարվել, հավանաբար, նկատել ես, որ քո առաջնորդները սխալներ են թույլ տալիս: Այդ իմանալուց հետո բնական արձագանքը սա է. «Եթե իմ առաջնորդը սխալներ է թույլ տալիս (թերություններ, բացթողումներ ունի, և այլն), ուրեմն ավելի լավ կլինի՝ ես զգույշ լինեմ: Նա, հնարավոր է, ինձ սխալ ուղիով տանի: Ես չեմ կարող նրան վստահել»:

Երբ դու կորցնում ես քո առաջնորդի հանդեպ հարգանքը, քեզ համար շատ դժվար կլինի նրան հնագանդվել: Աստված քեզ իրավունք չի տվել՝ գնահատելու քո առաջնորդներին: Կան մարդիկ, ովքեր ունեն այդ իրավունքը: Քեզ անհրաժեշտ է, որ ուշադրությունդ կենտրոնացնես Աստծո և առաջնորդներիդ հանդեպ քո պատասխանատվությունն իրականացնելու վրա, այն է՝ հնագանդվել քո առաջնորդներին, հարգել և սիրել նրանց:

Գլուխ 2.

Հնազանդության երեք մակարդակներ

Քո առաջնորդներին հնազանդվել սովորելու ասպարեզում կան երեք կարևոր մակարդակներ (քայլեր կամ փուլեր) հնազանդության մեջ աճելու, զարգանալու համար, որը դու պետք է հասկանաս և կիրառես քո կյանքում:

Հնազանդության այս երեք մակարդակները մենք կարող ենք համեմատել դպրոցի հետ (առաջին մակարդակ՝ հիմնական դպրոց, երկրորդ մակարդակ՝ ավագ դպրոց, երրորդ մակարդակ՝ բուհ): Դու պետք է ավարտես հիմնական դպրոցը՝ նախքան շարունակելն ավագ դպրոցում սովորելը, և այլն:

Հնազանդության երեք մակարդակներից յուրաքանչյուրը հիմնվում է նախորդի վրա: Դու պետք է ավարտես առաջին մակարդակը՝ նախքան երկրորդ մակարդակին անցնելը: Դու պետք է ավարտես երկրորդ մակարդակը՝ նախքան երրորդ մակարդակին անցնելը:

Մակարդակ 1. Հնազանդվի՛ր, քանի որ քեզ ասել են, որ անես դա:

Հնազանդության առաջին մակարդակը հեշտ է հասկանալ, սակայն դժվար է կիրառել կյանքում: Հնազանդվի՛ր, քանի որ քեզ ասել են. մի հանգամանք է, որը հակառակ է քո մարդկային բնույթին: Ահա մի քանի առաջարկներ, թե ինչպես դա կիրառես քո կյանքում:

- Ա. Մի՛ բողոքիր: Փիլիպպեցիներին 2:14-15
- Բ. Մի՛ հակաճառիր և մի՛ վիճաբանիր քո առաջնորդի հետ: Եբրայեցիներին 13:17
- Գ. Արա՛ (քո աշխատանքը) լավագույն ձևով: Կողոսացիներին 3:23
- Դ. Սովորի՛ր քեզ լավ զգալ հնազանդվելով:

Եթե աշխատում ես հնազանդության այս մակարդակները քո կյանքում իրականացնել, դու ճիշտ ուղու վրա ես, որը քեզ տանում է Աստծո ուզած մարդը

լինելուն: Այստեղ կարևոր հարցն այն է, որ դու որոշել ես հնագանդվել քո առաջնորդներին: Անցյալում դու, հնարավոր է, որոշել էիր չհնագանդվել քո առաջնորդներին՝ առանց նույնիսկ այդ մասին մտածելու: Մակայն, եթե ուզում ես հետևել Հիսուսին և Նրան դարձնել քո կյանքի Առաջնորդը, ուրեմն պետք է արձագանքես առօրյա իրավիճակներին այնպես, ինչպես Նա է ուզում, որ արձագանքես: Քո առաջնորդներին հնագանդվելն այն հիմնական ձևերից մեկն է, որով դու կարող ես ցույց տալ, որ ուզում ես հետևել Հիսուսին:

Այս մակարդակի վրա հնագանդվելը քեզ համար հնարավորություն է՝ հնագանդ վերաբերմունք զարգացնելու և քո կյանքից անհնագանդ վերաբերմունքները դուրս հանելու համար: Քո առաջնորդներին հնագանդվելը սկսվում է քո գլխում. դու որոշում ես կայացնում: Երբեմն դա նման է քո ներսում տեղի ունեցող պատերազմի: Ամեն անգամ, երբ որոշում ես հնագանդվել քո առաջնորդներին, դու մեկ կամ ավելի քայլ ես անում՝ առավելագույնս մոտենալով Աստծո ուզած մարդը դառնալուն:

Եթե ուզում ես նշված հնագանդ վերաբերմունքներն աճեն քո կյանքում, դու պետք է ինքդ քեզ ասես. «Ես ուզում եմ հնագանդվել իմ առաջնորդներին»: Սա նշանակում է Աստծուն հաճելի ցանկություններ զարգացնել: Մակայն որոշ մարդիկ պայքար ունեն իրենց ներսում. «Եթե ասեմ, որ ուզում եմ հնագանդվել իմ առաջնորդներին, սուտ կխոսեմ, քանի որ չեմ ուզում հնագանդվել իմ առաջնորդներին»:

Ամեն անգամ, երբ քո առաջնորդն ասում է, որ ինչ-որ բան անես, քեզ համար հնարավորություն է ընձեռնվում որոշում կայացնելու: Դու կարող ես ինքդ քեզ ասել. «Ես կհնագանդվեմ իմ առաջնորդին»: Եթե անգամ չես զգում, որ ուզում ես հնագանդվել, դու կարող ես որոշել հնագանդվել: Անհրաժեշտ է, որ ինքդ քեզ ասես, թե ինչ պետք է անես:

Դու պետք է աճես՝ հասնելու համար այն կետին, որում քո նորմալ արձագանքը կլինի՝ «Ես կհնագանդվեմ», երբ քո առաջնորդը քեզ որևէ բան ասի, որ անես:

Կույր հնագանդություն:

Առաջին մակարդակի հնագանդությունը կույր հնագանդությունն չէ: Դու պետք է միտքդ արթուն պահես և մտածես սովյալ իրավիճակի մասին: Դու պետք է նայես Հիսուսին, որպեսզի օգնի քեզ, օգնի տեսնել, թե ինչպես հնագանդ վերաբերմունք զարգացնես, զարգացնես հնագանդ մտածելակերպ՝ հենց հիմա և ապագայում օգտագործելու համար:

Կույր հնագանդությունը մարդկանց կարող է տանել վտանգավոր ուղիով: Դավիթի ղեկավարը նրան խնդրել էր, որ ոմն մեկին ինչ-որ բան ասեր: Ճանապարհին Դավիթը նկատեց, որ այդ հանձնարարության մեջ խնդիր կա և, հնագանդ լինելով հանդերձ, նա հետ եկավ իր ղեկավարի մոտ և հարցրեց. «Դուք ինձ հանձնարարում եք, որ խաբե՞մ այդ մարդուն»: Նրա ղեկավարն արագ փոխեց հանձնարարությունը, որպեսզի նա ստիպված չլիներ սուտ խոսել:

Կույր հնազանդությունը երբեք չի հարցնում. «Արդյո՞ք սա անելը ճիշտ է»: Կույր հնազանդությունը միանգամայն անտեսում է հնազանդության հետևանքների մասին խորհելը:

Աստված կույր հնազանդություն չի փնտրում: Նա փնտրում է գիտակցված հնազանդություն, հասկացված հնազանդություն: Երբեմն մենք, հնարավոր է, չհասկանանք, թե ինչու է մեր առաջնորդը մեզ ասում, որ ինչ-որ բան անենք: Միննույն է, մենք հարցին պետք է մոտենանք հնազանդվելու պատրաստակամությամբ:

4-րդ գլխում ավելի մանրամասն կդիտարկենք, թե ինչպես է պետք արձագանքել, երբ քո առաջնորդը հանձնարարում է անել մի բան, որը, ըստ քեզ, սխալ է:

Շատ քրիստոնյաներ պայքարի մեջ են լինում հնազանդության հետ ոչ թե այն պատճառով, որ նրանք չար դեկավարներ ունեն, այլ որովհետև անհնազանդության մի ամբողջ պատմություն ունեն: Նրանք չեն ուզում, որ ինչ-որ մեկն ասի, թե ինչ անեն իրենք: Նրանք ուզում են՝ իրենք կայացնեն իրենց բոլոր որոշումները: Սակայն իրականությունն այն է, որ Աստված առաջնորդներ է կարգել քո կյանքում, որպեսզի օգնեն քեզ: Ինչքան շատ ես նրանց հնազանդվում, այնքան արագ ես աճում՝ դառնալու համար այնպիսի անձնավորություն, ինչպիսին Աստված է ուզում, որ լինես:

Առաջին մակարդակի բանալին որոշումն է՝ հնազանդվել: Մեկ այլ տարբերակ է քո առաջնորդին չհնազանդվելը: Իսկ եթե որոշում ես հնազանդվել քո առաջնորդներին, դու հնազանդություն սովորելու ճանապարհի վրա ես:

Սակայն 1-ին մակարդակի վրա կանգ առնել պետք չէ: Մա ընդամենը սկզբնական մակարդակն է, և մենք կարիք ունենք առաջ շարժվելու դեպի 2-րդ մակարդակը:

Մակարդակ 2. Հնազանդվի՛ր և պարզի՛ր հիմնական պատճառը, թե ինչու է քո առաջնորդը քեզ ասել, որ դա անես:

Հնազանդության 2-րդ մակարդակն ավելին է, քան հնազանդվելը: Ի հավելումն քո առաջնորդին հնազանդվելուն՝ դու օգտագործում ես նաև քո ուղեղը: Երկրորդ մակարդակը պահանջում է, որ նաև մտածես: Սովորի՛ր հնազանդվել և փորձի՛ր հասկանալ, թե ինչպես է քո առաջնորդը մտածում: Պարզի՛ր հիմնական պատճառը, թե ինչու է քո առաջնորդը քեզ ասել, որ անես այդ բանը:

Ա. Ինչպե՞ս կարող եմ պարզել հիմնական պատճառը, թե ինչու է իմ առաջնորդն ինձ ասել, որ ինչ-որ բան անեմ:

- 1) Ինքդ քեզ պատկերացրո՞ւ քո առաջնորդի վիճակում և նայի՛ր հարցին նրա տեսանկյունից:
- 2) Հարցրո՞ւ քո առաջնորդին, թե ինչու է նա ուզում, որ դու տվյալ հանձնարարությունը կատարես:

Զգուշացում. Ուշադի՛ր եղի՛ր, թե *ե՞րբ* ես քո առաջնորդին տալիս այս հարցը և *ինչպե՞ս* ես տալիս:

Ե՞րբ: Սովորաբար ավելի լավ է սպասել, որպեսզի ավելի ուշ հարց տաս քո առաջնորդին: Եթե *նախքան* հնագանդվելը քո առաջնորդից պահանջես ասել պատճառը, թե ինչո՞ւ պետք է տվյալ բանն անես, նա, հավանաբար, քո հարցը կտեսնի որպես ընդվզում իր հեղինակության դեմ:

Ինչպե՞ս: Քո հարցը քո առաջնորդին այնպե՛ս տուր, որ երևա, որ դու ուզում ես իմանալ, թե ինչպես կարող ես ավելի լավ հնագանդվել: Քո հարցն այնպես մի՛ տուր, որ տպավորություն ստեղծվի՝ կարծես դու ընդվզում ես քո առաջնորդի հեղինակության դեմ: Հարցրո՞ւ. «Ինչո՞ւ է սա անելը ճիշտ»: Մի՛ հարցրու. «Ինչո՞ւ ես պետք է սա անեմ»:

- 3) Փորձի՛ր բացահայտել հիմնական պատճառը, թե ինչո՞ւ է Աստված ուզում, որ դու դա անես: Ի՞նչ կույր կետեր (թույլ կողմեր) է Աստված փորձում ցույց տալ քեզ քո առաջնորդների միջոցով: Ի՞նչ բնավորության գիծ է Աստված փորձում կառուցել քո կյանքում քո առաջնորդների միջոցով:
- 4) Քո առաջնորդներին հարցրո՞ւ, թե ինչ նպատակներ ունեն նրանք քեզ համար:

Աստվածաշնչում շատ կան օրինակներ, երբ մարդիկ որոշում են կայացրել հնագանդվել իրենց առաջնորդներին: Դանիելը երիտասարդ էր, հավանաբար նույնիսկ պատանի, երբ գերի տարվեց մեկ այլ երկիր: Այս նոր իրավիճակում նա ընտրվեց հատուկ դպրոց գնալու, որպեսզի վարժվեր ծառայելուն իր համար նոր այս կառավարության մեջ: Հենց առաջին օրը նա հանդիպեց մի մեծ խնդրի: Այն ուտելիքը, որ տալիս էին նրան ուտելու, հակառակ էր իր ժողովրդին տրված Աստծո օրենքներին:

Դանիելը մեծ զգուշությամբ արձագանքեց հիմնական պատճառին, թե ինչու էին իրեն ուտելիքի հետ կապված նման պատվեր տվել: Նա իր առաջնորդներին պատասխանելու հնարամիտ ձև գտավ՝ առանց Աստծո դեմ մեղք գործելու: Տե՛ս Դանիել 1-ին գլուխն այս պատմությունը կարդալու համար:

Բ. Ինչո՞ւ ես պետք է պարզեմ հիմնական պատճառը, թե ինչո՞ւ է իմ առաջնորդն ինձ ինչ-որ բան անելու հանձնարարություն տվել:

Դու պետք է բացահայտես հիմնական պատճառը, թե ինչո՞ւ է քո առաջնորդը քեզ ասում, որ ինչ-որ բան անես, որպեսզի կարողանաս անցնել Երրորդ մակարդակ և հնազանդվես քո կամքով՝ առանց առաջնորդի ասելու:

Հիմնական պատճառը, որ ուզում ես Երկրորդ մակարդակի վրա լինել, այն է, որ կարողանաս սովորել և աճել: Աստված ուզում է, որ դու ավելի լավ հասկանաս, թե ինչ է հնազանդությունը: Դու սրան կարող ես հասնել՝ սովորելով իրավիճակներին նայել քո առաջնորդի տեսանկյունից:

Հնազանդության Երկրորդ մակարդակը քեզ հնարավորություն է տալիս՝ հնազանդ վերաբերմունքներ զարգացնել: Դու շարունակում ես ինքդ քեզ ասել. «Ես ուզում եմ հնազանդվել իմ առաջնորդներին»: Երբ դու պարզում ես հիմնական պատճառը, թե ինչո՞ւ է քո առաջնորդը քեզ ասում՝ ինչ-որ բան անել, քեզ համար հնարավորություն էս ապահովում՝ ավելի լավ հասկանալու, թե ինչպես արձագանքել լավագույն ձևով:

Բոլոր առաջնորդները չէ, որ կատարյալ պատճառներ ունեն քեզ ինչ-որ բան հանձնարարելու համար: Երբեմն քեզ հանձնարարություն տալու նրանց հիմնական պատճառը կարող է տարբերվել այն մեկից, որ Հիսուսը կունենար, եթե Նա լիներ քո առաջնորդի փոխարեն: Սակայն դու, միևնույն է, պետք է հնազանդվես քո առաջնորդին, եթե, իհարկե, նրանց հանձնարարությունը քեզ մեղքի մեջ չի գցում: Մենք այս մասին ավելի շատ կխոսենք 4-րդ գլխում:

Եթե քո առաջնորդը չցանկանա քեզ հետ քննարկել հիմնական պատճառը, թե ինչո՞ւ է քեզ այդ հանձնարարությունը տվել, ընդունի՛ր այդ պատասխանը և շարունակի՛ր հնազանդվել: Ինքդ քեզ դատավորի տեղ մի՛ դիր, ով դատում է պատճառները՝ նախքան հնազանդվելու որոշում կայացնելը: Դու կարող ես աղոթել և խնդրել Աստծուն, որպեսզի օգնի քեզ՝ հասկանալու հիմնական պատճառը, եթե անգամ քո առաջնորդը մերժում է քեզ հետ խոսել այդ մասին:

Կենտրոնացի՛ր քո սեփական աճի վրա: Երկրորդ մակարդակում հնազանդվելը մի քայլ է, որը քեզ մոտեցնում է Աստծո ուզած անձնավորությունը դառնալուն: Սակայն կանգ մի՛ առ Երկրորդ մակարդակի վրա: Առա՛ջ շարժվիր դեպի հնազանդության Երրորդ մակարդակը:

Մակարդակ 3. Հնագանդվի՛ր քո կամքով:

Հնագանդության 3-րդ մակարդակը քո կամքով հնագանդվելն է, քանի որ դա անելը ճիշտ է:

Մա՛ պետք է լինի քո նպատակը. սովորել հնագանդվել քո կյանքի բոլոր ասպարեզներում: Դու հնագանդվում ես առանց առաջնորդի ասելու: Դու հնագանդվում ես, քանի որ ուզում ես ճիշտ բան անել: Դու հնագանդվում ես, քանի որ գիտես, որ դա անելը ճիշտ է:

Որոշ մարդիկ ուզում են միանգամից ցատկել Երրորդ մակարդակ՝ մի քանի փոքր վերանայումներով: Նրանք ուզում են ինքնագլուխ լինել, իրենց սեփական կանոնները հաստատել և անել միայն այն, ինչ իրենք են ուզում անել: Մակայն, Երրորդ մակարդակը միայն այդ մասին չէ: Երբ ապրում ես Երրորդ մակարդակում, դու դեռևս իշխանության տակ ես: Մակայն քո հնագանդությունը շատ անգամ գալիս է՝ նախքան քո առաջնորդը քեզ կխնդրի ինչ-որ բան անել:

Երրորդ մակարդակում ապրող մարդն արագ է հնագանդվելու հարցում: Նրանք չեն հնագանդվում որպես վերջին տարբերակ: Նրանք դանդաղ չեն հնագանդվելու մեջ: Նրանք արթուն են և հարցնում են. «Ինչպե՞ս կարող եմ հնագանդվել»: Նրանք համընթաց քայլում են իրենց առաջնորդների հետ և ուշադրություն են դարձնում նրանց վրա:

Քո կամքով հնագանդվելն ինքնակառավարման արտահայտություն է: Դա նաև իրական ազատության արտահայտություն է: Աստծո գաղափարն ազատության վերաբերյալ այն չէ, որ անենք՝ ինչ ուզում ենք, այլ կամավոր կերպով անենք այն, ինչ Նա է ուզում, որ անենք:

Մարդը, ով իր կամքով հնագանդվում է իր կյանքի բոլոր ասպարեզներում, կատարյալ է: Հիսուսը միակ անձնավորությունն է, ով այս բանն արել է Իր ողջ կյանքում: Մենք բոլորս արդեն ձախողվել ենք, սակայն կարող ենք աշխատել այս նպատակի ուղղությամբ: Ինչքան ուժգին ես դու քո կամքով հնագանդվում, այնքան շատ ես նմանվում Հիսուսին: Դու Սուրբ Հոգու օգնության կարիքը կունենաս, որպեսզի կարողանաս հնագանդվել քո կամքով: Նա պատրաստ է քեզ օգնել և ուժ տալ՝ քո կամքով հնագանդվելու համար:

Մի խնդիր կա. քո կամքով հնագանդվելը կարելի է իրականացնել նաև առանց ներքին իրական փոփոխության: Վերջնական արդյունքում, հնագանդվելով հանդերձ, այնուամենայնիվ, դու քո կյանքը կապրես ավելի ցածր մակարդակի վրա, քան Աստված էր ծրագրել քեզ համար: Այդ դեպքում դու կհնագանդվես ընդամենը անհնագանդության տիպի հետևանքներից խուսափելու համար: Մակայն Աստված ավելին է փնտրում: Նա ուզում է տեսնել, որ դու աճում ես և զարգացնում բնավորության այնպիսի գծեր, որոնք Հիսուսի հետևորդի իրական նշաններն են:

Հնագանդությունը կարող է քո կյանքի համար հրաշալի սահմաններ ապահովել, քանի դեռ դու աստվածահաճո բնավորություն ես զարգացնում: Բայց և այնպես, դու պետք է գիտակցես, որ Աստված ավելին է փնտրում, քան ընդամենը հնագանդ բնավորություն. Աստված սիրում է քեզ և ուզում է անձնական փոխհարաբերություն ունենալ քեզ հետ:

Գլուխ 3.

Ինչպե՞ս պետք է արձագանքես քո առաջնորդի հետ խոսելիս

Քո առաջնորդների հետ ունեցած փոխհարաբերությունների մեջ կլինեն իրավիճակներ, երբ դու կարիք կունենաս պատասխանել նրանց: Ո՞րն է քրիստոնյային հատուկ ճիշտ ձևը, որով պետք է պատասխանես քո առաջնորդին: Ի՞նչ պետք է ասես: Ինչպե՞ս պետք է ասես:

Թե ինչպես պատասխանես քո առաջնորդին, ծայրահեղ կարևոր մի ասպարեզ է, որը դու պետք է հասկանաս: Առաջնորդների հետ շատ կոնֆլիկտներ տեղի են ունենում հենց այս հարցի շուրջ: Քանի՞ անգամ է քո առաջնորդին տված քո պատասխանն իրավիճակն ավելի բարդացրել: Դա նման է կրակի վրա յուղ լցնելուն: Եթե դու ճիշտ չես պատասխանում, ապա կարող ես իրավիճակն ավելի վատացնել, ոչ թե լավացնել:

Ահա մի քանի ուղեցույցներ, որոնք քեզ կօգնեն ծրագրելու հարցում, թե ինչ ես ուզում ասել քո առաջնորդին: Դու կարող ես մի քանի օր կամ ժամ ծրագրել, թե ինչ ես պատրաստվում ասել նրան: Մեկ այլ պարագայում դու, հնարավոր է, մի քանի րոպե կամ վայրկյան ունենաս՝ պատասխանելու համար: Երբ սովորես, թե ինչպես պատասխանես քո առաջնորդին, դա կօգնի քեզ՝ նրանց հետ ավելի ճիշտ վարվել, և քեզ համար ավելի հեշտ կլինի նրանց հնագանդվելը:

Ա. Մի՛ մեղադրիր կամ քննադատիր քո առաջնորդներին:

Համոզվա՛ծ եղիր, որ հնագանդ վերաբերմունք ունես, երբ պատասխանում ես նրանց: Մի՛ ասա. «Դու այս հարցում սխալ էիր...»:

Դու պետք է ուշադիր լինես, որպեսզի այնպես խոսես քո առաջնորդի հետ, որ երևա, որ դու լսող հոգեբանություն ունես, այսինքն՝ ուզում ես սովորել: Քո դերը քո առաջնորդին ուղղելը չէ:

Որպես որոշում, թե ինչպես պետք է պատասխանես քո առաջնորդին, դու կարող ես թույլտվություն խնդրել՝ քո հանձնարարության հետ կապված հարց տալու համար: Կամ էլ՝ կարող ես թույլտվություն խնդրել՝ խորհուրդ տալու: Եթե քո առաջնորդն ասի՝ «Ո՛չ», այդ դեպքում պետք է առաջ անցնես՝ կատարելու քո հանձնարարությունը:

Քո առաջնորդին ճիշտ դիմելու համար կարող ես տալ այս հարցը.
«Կարո՞ղ եք ինձ օգնել ավելի ճիշտ հասկանալ...»:

Բ. Քո պատասխանը հիմնավորի՞ր քո կարծիքի վրա:

Քո մեկնաբանությունը սկսի՞ր՝ ասելով. «Ես կարծում եմ...», կամ՝ «Իմ կարծիքով...»: Մի՛ սկսիր՝ ասելով. «Բռնորն էլ գիտեն, որ ճիշտը սա է...», կամ՝ «Հասկանալի (պարզ) է, որ ...»:

Գ. Այնպե՛ս ասա, որ օգնես քո առաջնորդին՝ հասնել իր նպատակին:

«Եթե Դուք ցանկանալիք սա նորից բացատրել ինձ, կարծում եմ՝ ես կկարողանայի ավելի ճիշտ անել դա»: Մենք կարիք ունենք դուրս գալ մեր փոքրիկ աշխարհից և ավելի լայն տեսակետից նայել, թե ինչ է կատարվում մեր շուրջը: Ինչի՞ն է փորձում քո առաջնորդը հասնել:

Մի երիտասարդ աղջիկ ինչ-որ հարցի շուրջ խոսում էր հոր հետ: Հայրը հարցրեց նրան. «Ի՞նչ ես կարծում, ո՞րն էր հիմնական պատճառը, որ ես քեզ «ո՛չ» ասացի»: Նա մի փոքր մտածելուց հետո հորն ասաց. «Դու ընդամենը փորձում ես դառնացնել իմ կյանքը»:

Այս երիտասարդ աղջիկը տարված էր ամեն բան իր ուզած ձևով անելու մոլուցքով, և նրան թվում էր, որ միակ պատճառը, թե ինչու են մարդիկ ուզում նրան ինչ-ինչ հարցերում կանգնեցնել, ընդամենը նրա կյանքն ավելի դառնացնելն է:

Դու պետք է հարգես քո ավագներին և հասկանաս, որ մեծ մասամբ նրանք շատ բարի պատճառներ են ունենում՝ քեզ ինչ-որ բան հանձնարարելիս:

Այս թեման գործնականում հասկանալու համար դու կարող ես ինքդ քեզ հարցնել. «Եթե այս իրավիճակում ես լինեի առաջնորդը, ինչո՞ւ պետք է այս անձնավորությանը խնդրեի տվյալ բանն անել: Ինչպե՞ս կուզենայի, որ նրանք վերաբերվեն իմ հեղինակությանը»: Այս հարցերը քեզ կարող են օգնել՝ նոր պատկերացում կազմելու, թե ինչպես պատասխանես քո առաջնորդին:

Դ. Նպատակն է՝ ր դիր, թե ինչպես ես արձագանքելու, երբ որոշակի խնդիրներ ի հայտ գան:

Նույն առաջնորդների հետ շարունակական շփումը քեզ հնարավորություն է տալիս իմանալ, թե ինչ են նրանք ամենից առավել գնահատում, և թե ինչն է նրանց բարկացնում: Փոխանակ մտածելու՝ «Իմ առաջնորդները պետք է փոխվեն», փորձի՛ր գտնել գործնական տարբերակներ՝ նրանց քրիստոսակերպ վերաբերմունքով պատասխանելու համար: Երբ դու դժվարանում ես հնագանդվել, քո ուշադրությունը պետք է կենտրոնացած լինի քո արձագանքի, այլ ոչ թե քո առաջնորդներին փոխելու վրա:

Ժամանակ հատկացրու, որպեսզի մտածես, թե ինչպես ես արձագանքելու, երբ դժվար իրավիճակներ ունենաս՝ կապված քո առաջնորդների հետ: Օրինակ՝ «Երբ ես բարկանամ,

- 1) ես կլռեմ»:
- 2) ես կփորձեմ հասկանալ, թե ինչու եմ բարկացել»:
- 3) ես կփորձեմ իրավիճակին նայել իմ առաջնորդի տեսանկյունից»:

Ե. Ժամանակային սահմանափակում դիր, թե երբ ես խոսելու քո առաջնորդի հետ:

Կան իրավիճակներ, երբ դու գիտես, որ կարիք կա գնալու և քո առաջնորդի հետ խոսելու: Շատ հեշտ է վերացական ասել. «Ես մի հարմար պահ կգտնեմ...»: Մի՛ սպասիր կատարյալ իրավիճակի: Կո՛ւլ տուր քո հպարտությունը, գնա՛ և պարզաբանի՛ր հարցերը՝ հնարավորինս շուտ:

Օրինակ. «Հենց նախաճաշից հետո ես կմոտենամ իմ առաջնորդին ու կասեմ, որ...»: «Ուզում էի Ձեզ ասել, որ...»:

Զ. Աստճո՛ւն նայիր, որպեսզի գործություն ստանաս ճիշտն անելու համար:

Քո առաջնորդներին ճիշտ ձևով պատասխանել սովորելիս (այնպես, ինչպես Աստված է ուզում, որ դու պատասխանես) քեզ կարող է անհնարին թվալ այդպես վարվելը: Առաջինը. դու պետք է հասկանաս, որ անհնագանդության վերաբերմունքները զարգացել են քո ողջ կյանքի ընթացքում, և այդ հին սովորությունները շատ դժվար է փոխել:

Պողոսն իր կյանքի այս պայքարները նկարագրում է Հռոմեացիներին 7-րդ գլխում:

Հոմեագիներին 7:14-25.

¹⁴«Որովհետև գիտենք, որ Օրենքը հոգևոր է, իսկ ես՝ մարմնավոր, մեղքին վաճառված: ¹⁵Քանի որ ինչ որ անում եմ, ես համաձայն չեմ, ոչ թե ուզածս բաներն եմ անում, այլ հակառակը՝ անում եմ այն, ինչ ատում եմ: ¹⁶Իսկ եթե անում եմ այն, ինչ չեմ կամենում, ապա հաստատում եմ, թե Օրենքը բարի է: ¹⁷Ուրեմն ոչ թե ես եմ գործում դա, այլ՝ մեղքը, որ իմ մեջ է բնակվում: Որովհետև գիտեմ, որ իմ մեջ (այսինքն՝ իմ մարմնականի մեջ) ոչ մի բարի բան չի բնակվում: ¹⁸Որովհետև կամենալը ներկա է իմ մեջ, սակայն ինչպես անել այն, ինչ բարի է, ես չեմ գտնում: ¹⁹Քանի որ բարին, որ կամենում եմ անել, չեմ անում, բայց չարը, որ չեմ կամենում, այն անում եմ: ²⁰Ուրեմն, եթե չուզածս բաներն եմ անում, այլևս ոչ թե ես եմ դա անում, այլ՝ իմ մեջ բնակված մեղքը:

²¹Ապա, իմ մեջ գտնում եմ մի օրենք, որ երբ կամենում եմ բարին անել, չարն ինձ հետ ներկա է. ²²որովհետև իմ ներքին մարդով ես հրճվում եմ Աստծո Օրենքով, ²³բայց մի ուրիշ օրենք եմ տեսնում իմ անդամների մեջ, որ պատերազմում է իմ մտքի օրենքի դեմ և ինձ գերի է դարձնում մեղքի օրենքին, որ իմ անդամների մեջ է:

²⁴Ի՛նչ խղճալի մարդ եմ ես, ո՞վ կազատի ինձ այս մահվան մարմնից: Գոհություն եմ տալիս Աստծուն մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով: Այսպես, ուրեմն, ես ինքս մտքով ծառայում եմ Աստծո Օրենքին, բայց մարմնականով՝ մեղքի օրենքին»:

Հնարավոր է՝ դու հեշտությամբ նմանություններ գտնես քո և Պողոսի նկարագրած պայքարների միջև: Նա ուզում է անել ճիշտը, սակայն վերջնական արդյունքում հայտնվում է հակառակ կողմում: Նա ըմբոստություն է տեսնում իր սրտում. դա սատանան չէ: Դա նրա սեփական սիրտն է՝ իր սեփական մեղսալից ճանապարհներով, որոնք գերեվարում են նրան և թալանում նրա՝ ճիշտ որոշումներին հետևելու գործությունը:

Դու պետք է գաս այն նույն եզրակացության, ինչ Պողոսն եկավ. դու չես կարող հնազանդվել սեփական ուժերով: Դու Աստծո՝ քեզ օգնելու գործության կարիքն ունես, որպեսզի հնազանդությամբ պատասխանես քո առաջնորդներին: Աստված խոստացել է, որ կտա քեզ պետք եղած գործությունը, երբ դու տկար լինես:

Բ Կորնթացիներին 12:9.

«Եվ Նա ասաց ինձ. «Իմ շնորհը քեզ բավական է, որովհետև Իմ գործությունը տկարության մեջ է կատարյալ դառնում»: Հետևաբար ավելի շուտ, ուրախությամբ իմ տկարություններով կպարծենամ, որ Քրիստոսի գործությունը բնակվի իմ մեջ»:

Փիլիպպեցիներին 4:19.

«Բայց իմ Աստվածը ձեր բոլոր կարիքները պիտի հոգա Փառքի մեջ՝ Իր ունեցած հարստության չափով՝ Քրիստոս Հիսուսի միջոցով»:

Դու կարող ես վստահ լինել, որ Աստված քեզ կտա հարկ եղած ողջ գործությունը քո առաջնորդներին հնագանդվելու համար: Նա միշտ ավելի գործություն ունի, քան քեզ պետք է: Քո առաջնորդներին աստվածահաճո ձևով պատասխանելը, հնարավոր է, քեզ համար դժվար լինի, սակայն Աստված միշտ պատրաստ է օգնել քեզ: Դու ընդամենը պետք է դիմես Նրան օգնության համար:

Ամփոփում

Քեզնից է կախված՝ կհեշտանա՞ քո կյանքը, թե՞ ավելի կդժվարանա՞ լի բազմաթիվ խնդիրներով: Թե ինչպե՞ս ես դու պատասխանում քո առաջնորդներին, կարող է խաղաղություն բերել քո կյանքում, կամ՝ ճիշտ հակառակը:

Այստեղ առանցքային է՝ քո հայացքը քո ցանկություններից ու փափագներից կտրելն ու ուշադրությունդ Հիսուսի վրա սևեռելը:

Լավագույն որակներից մեկը դու կարող ես քո կյանքում զարգացնել՝ ինքդ քեզ հարցնելով. «Հիսո՞ւս, ինչպե՞ս ես դու ուզում, որ պատասխանեմ իմ առաջնորդին այս իրավիճակում»: Փորձի՛ր պատկերացնել, թե ինչպե՞ս Հիսուսը կպատասխաներ, եթե լիներ քո փոխարեն և հանդիպեր նույն դժվարություններին, ինչին դու ես հանդիպում:

Գլուխ 4.

Ինչպե՞ս պետք է վարվես, երբ քո առաջնորդը քեզ ասում է, որ ինչ-որ սխալ բան անես

Երբևէ եղե՞լ է, որ քեզ վրա իշխանություն ունեցող որևէ անձնավորություն քեզ ասի, որ սխալ բան անես: Դու անմիջապես կարող ես մտքովդ անցկացնել մի քանի երևակայական իրավիճակներ, օրինակ. «Ի՞նչ կանեի ես, եթե իմ առաջնորդն ինձ ասեր, որ ցատկեի տասը հարկանի շենքի տանիքից: Ես կենթարկվեի՞ »:

Սակայն նայենք իրականության աչքերին: Քանի՞ անգամ է քո առաջնորդներից մեկը քեզ հանձնարարել անել այնպիսի բան, որն ըստ քեզ՝ միանշանակ սխալ է եղել: Մեծ մասամբ քեզ հանձնարարում են ճիշտ բաներ անել: Մյուս դեպքերը, երբ քո առաջնորդները քեզ հանձնարարում են սխալ բաներ անել, հավանաբար կազմում են 100-ից մեկը կամ 1000-ից մեկը:

Տե՛ս քո Ուսուցման ուղեցույցի 3-րդ և 5-րդ նախագծերը, որտեղ խոսվում է Դանիել 1-ի և 3-րդ գլուխների մասին: Այս գլուխները պատմում են, թե ինչպես են որոշ մարդկանց ասում, որ սխալ հանձնարարություններ կատարեն, և թե ինչպես են նրանք պատասխանում իրենց ղեկավարներին: Այս մարդիկ գործնական օրինակներ են ներկայացնում, որոնք դու կարող ես օգտագործել՝ քո առաջնորդներին Աստծուն պատիվ բերող ձևով պատասխանելու համար:

Ա. Ուշադի՛ր եղիր, որ ճիշտ գնահատես, թե ինչ են քեզ ասել, որ անես:

Քո առաջնորդին անմիջապես պատասխանելու փոխարեն խորը շո՛ւնչ քաշիր և լռի՛ր: Մի՛ խոսիր: Սկզբում մտածի՛ր: Հետո խնդրի՛ր Աստծուն, որ օգնի քեզ՝ զգուշությամբ արձագանքելու տվյալ իրավիճակին:

1. Համոզվի՛ր, որ ճիշտ ես լսել, թե ինչ է քո առաջնորդը քեզ ասել:

Մի՛ ենթադրիր, որ ճիշտ ես լսել: Եթե կարծում ես, որ քո առաջնորդի հանձնարարությունը սխալ է, ուրեմն կա՛նց ան: Միանգամից եզրակացություն մի՛ արա, որ քո նա սխալ է և փորձում է քեզ մեղքի մեջ ներգրավել:

Ճշտի՛ր քո առաջնորդի հետ՝ համոզվելու համար, որ դու ճիշտ ես լսել նրան: Քո հարցն այնպե՛ս ձևակերպիր, որ երևա, թե ինչ է, ըստ քեզ, ասել քո առաջնորդը: Մի՛ մեղադրիր կամ քննադատիր նրան:

Մի օր Գեղամը հանդիպում է իր առաջնորդի հետ՝ գործի հետ կապված մի հարց քննարկելու: Առաջնորդը Գեղամին ասում է, որ այդ հարցի հետ կապ ունեցող մի մարդու հատուկ ուղերձ փոխանցի: Բայց երբ Գեղամը մտածում է ուղերձի մասին, որը նրան խնդրել էին փոխանցել, նրա համար պարզ է դառնում, որ պետք է խաբի այդ անձնավորությանը: Ուստի, Գեղամը դիմում է իր առաջնորդին, ով քրիստոնյա էր, և հարցնում է նրան. «Դուք ինձ խնդրում եք խաբե՞լ այդ անձնավորությանը»:

Գեղամի առաջնորդն անմիջապես փոխում է այդ անձնավորությանը փոխանցվելիք ուղերձը: Երաշխիք չկա, որ քո իրավիճակն այնքան արագ կփոխվի, ինչքան Գեղամինը: Սակայն դու պետք է պատրաստ լինես անելու այն, ինչ Գեղամն արեց. պարզաբանում խնդրել քո առաջնորդից:

Քո հարցը առաջնորդին այնպե՛ս տուր, որպեսզի նա տեսնի, որ դու չես փորձում ըմբոստ լինել: Եթե դու ճիշտ չես հասկացել քո առաջնորդին, ուրեմն խնդիրը շատ արագ կլուծվի: Իսկ եթե դու առաջին անգամից նրան ճիշտ ես հասկացել, այսինքն քեզ ասել են, որ ինչ-որ սխալ բան անես, ուրեմն պետք է հետևես այս գլխի ուղեցույցի մնացած մասին:

Մի՛ վախեցիր քո առաջնորդին հարցնել, թե արդյոք ճի՞շտ ես հասկացել նրա ասածը: Եթե դու համարես, որ ճիշտ ես լսել, սակայն այդպես չլինի, դա կարող է շատ վատ հետևանքներ ունենալ:

Մի կիրակի օր հովվի կինը նախքան ժողովը սկսվելը նվագում էր երգեհոնի վրա: Երգչախմբի անդամներից մեկը մոտեցավ նրան և հարցրեց երգերից մեկի մասին, որը նա պետք է երգեր այդ առավոտ: Քանի որ հովիվն էր առաջնորդում երգչախմբին, հովվի կինն ասաց երգչախմբի անդամին. «Գնա՛ Հելլի մոտ» (նրա ամուսնու անունը Հելլ էր): Երգչախմբի անդամին թվաց, թե նա ասում է. «Գնա՛ դժոխք» (անգլ. hell), և վիրավորված ու խիստ բարկացած հեռացավ: Նա լուրեր տարածեց եկեղեցում, որ հովվի կինն իբր իրեն ասել է. «Գնա՛ դժոխք»:

Եթե երգչախմբի անդամը հովվի կնոջը հարցներ, թե արդյոք ճի՞շտ է հասկացել նրան, ապա իրավիճակը միանգամից կհարթվեր: Սակայն քանի որ նա այդպես չվարվեց, նրա տարածած լուրերի աղետալի հետևանքները մեծ ցավ ու դժվարություններ պատճառեցին հովվի ու նրա կնոջ ծառայությանը:

Այս պատմությունը ցավալի ավարտ ունեցավ. ճիշտ չհասկանալու պատճառով առաջացած վնասն այնքան մեծ էր, որ հովիվն ու իր կինը ստիպված թողեցին այդ եկեղեցին:

2. Կողմնորոշվի՛ր, թե այն, ինչ քեզ ասել են, որ անես, իրո՞ք մեղք է:

Ուշադի՛ր եղիր քո հանձնարարությունը կամ հրահանգը գնահատելիս: Եթե դու դրան հնազանդվես, Աստծո՞ւ ր՝ օրենքը կխախտես: Կամ, միգուցե, այդ հրահանգը քեզ անտեղի է թվում: Միգուցե քեզ թվում է, թե այն անիմաստ է: Կամ քո տեսանկյունից այդ կանոնը կամ որոշումը վատն է թվում: Դու կարծում ես, որ շատ ավելի լավ ձև՝ կա այդ գործն անելու համար: Քեզ թվում է՝ քո ղեկավարը շատ մեծ սխալ է արել:

Դա մի կանոն է, որն այնքան էլ ազնիվ չի թվում: Օրինակ, ասենք թե դու և ինչ-որ մեկը հանձնարարություն եք ստանում՝ ամեն օր տվյալ գործը կատարել, որը կապված է այն տան հետ, որտեղ դուք ապրում եք: Քեզ մի հանձնարարություն են տվել, որը դու պետք է անես օրը երեք անգամ՝ ինչպես մյուս սովորական աշխատանքները: Քո արած լրացուցիչ աշխատանքային ժամերի համար ոչ մի ազատ ժամանակ կամ այլ տեսակի փոխհատուցում չի տրվելու քեզ: «Մա սխալ է», - ասում ես դու: Բայց արդյո՞ք դա մեղք է: Դու իրականում կխախտես՝ ու Աստծո՞ւ օրենքներից որևէ մեկը, եթե անես այն, ինչը քեզ հանձնարարել են:

Կամ գուցե դու բարկացե՞լ ես քո առաջնորդի վրա, երբ նա կոպիտ է եղել քեզ հետ՝ պահանջելով, որ ինչ-որ բան անես: Քեզ կարող է թվալ, որ քո առաջնորդն անպատասխանատու է: Մակայն արդյո՞ք այն ձևը, որով նա խոսել է քեզ հետ, քեզ իրավունք է տալիս անհնազանդ լինելու նրան:

Եթե քո առաջնորդը քեզ այնպիսի հանձնարարություն է տվել, որը մեղք չէ, դու պարտականություն ունես՝ հնազանդվելու քո առաջնորդին: Եթե դա մեղք չէ, ուրեմն տվյալ իրավիճակը չի համընկնում այս գլխի մնացած նյութի հետ: Դու պատասխանատվություն ունես՝ հնազանդվելու քո առաջնորդին, նույնիսկ եթե տվյալ կանոնը քեզ դուր չի գալիս: Դու կարող ես տվյալ իրավիճակը քննարկել քո առաջնորդի հետ՝ տեսնելու, թե արդյոք դու կարող ես ներկայացնել քո սեփական տեսակետը: Հնազանդության երեք մակարդակները, որ նախապես քննարկել էինք այս դասընթացին, հիմա համընկնում են այս իրավիճակին:

Ամեն անգամ, երբ քո առաջնորդը քեզ հանձնարարություն է տալիս, դու դա պետք է ընկալես որպես Աստծուն և, եթե հնարավոր է, նաև քո երկրավոր առաջնորդներին հնազանդվելու հնարավորություն: Եթե քո առաջնորդը քեզ հանձնարարում է կատարել մի բան, որ մեղք է, դու պետք է որոշում կայացնես, թե ում ես հնազանդվելու՝ Աստծո՞ւն, թե՞ քո առաջնորդին: Այնպես որ, եթե անգամ դու որոշես չհնազանդվել քո առաջնորդին, դու դա պետք է անես, քանի որ դրա փոխարեն որոշել ես հնազանդվել Աստծուն:

3. Եթե դա մեղք է, կողմնորոշվի՞ր, թե ինչ մեղք է:

Եթե վստահ ես, որ քո առաջնորդը քեզ մեղսալից բան է հանձնարարել, ուրեմն դու պետք է ուշադիր լինես և պատասխանես հետևյալ հարցին. «Աստծո օրենքներից ո՞ր մեկը դու կխախտես, եթե անես այն, ինչ քո առաջնորդն է հանձնարարել քեզ»:

Երբեմն քո առաջնորդը կարող է հանձնարարել մի բան, որը քեզ լրիվ հիմարություն է թվում: «Դա չի կարող ճիշտ լինել: Դա պետք է որ մեղք լինի», - մտածում ես դու: Սակայն փորձի՛ր կոնկրետ լինել: Կողմնորոշվի՛ր, թե Աստծո ո՞ր օրենքը դու կխախտես, եթե հնագանդվես քո առաջնորդին:

Քեզ հանձնարարել են սո՞ւտ խոսել: Քեզ հանձնարարել են գողանա՞լ ինչ-որ բան:

Հին Կտակարանում կարդում ենք, որ Հովսեփն աշխատում էր Պետափրեսի տանը: Օրեր շարունակ նրա կինը Հովսեփին առաջարկում էր կենակցել իր հետ: Հովսեփը կարիք չունեի աղոթելու, որպեսզի իմանար, թե արդյո՞ք այդ կնոջ առաջարկածը մեղք է: Նա լիովին հասկացել էր, թե ինչ է իրենից ուզում Պետափրեսի կինը, և գիտեր, որ եթե հնագանդվեր այդ կնոջը, մեղք կգործեր Աստծո առաջ: Դու այս ամբողջ պատմությունը կարող ես կարդալ Ծննդոց 39-րդ գլխում:

Բ. Պարզի՛ր հիմնական պատճառը, թե ինչո՞ւ է քո առաջնորդը քեզ հանձնարարում, որ դա անես:

Սա ամենակարևորն է: Եթե դու չհասկանաս հիմնական պատճառը, թե ինչո՞ւ է քո ղեկավարը քեզ տվյալ գործը հանձնարարել, ապա չես կարողանա պատշաճ կերպով պատասխանել:

Իսկ նրանց սխալ հանձնարարության հիմնական պատճառը պարզելուց հետո դու պետք է կողմնորոշվես, թե հետևյալ չորս խմբերից որի՞ն է այն լավագույնս համապատասխանում:

1. Հիմնական պատճառը քո օգուտի՞ համար է:

Միգուցե հիմնական պատճառը մեղքը չէ: Տե՛ս Դանիել 1-ին գլուխը՝ որպես օրինակ, որ Դանիելի առաջնորդը նրա համար լավն էր ցանկանում՝ կապված նրա ուսման հետ: Դանիելի առաջնորդը ցանկություն չունեի Դանիելին և նրա երեք ընկերներին մեղքի մեջ գցել: Նրա նպատակն այն էր, որ Դանիելի և նրա ընկերների համար լավագույն ուտելիքն ապահովեր, որպեսզի նրանք առողջ լինեին:

2. Հիմնական պատճառը քեզ մեղքի մեջ գցե՞լն է:

Տե՛ս Ծննդոց 39-ը և Դանիել 3-ը՝ որպես դրա երկու օրինակներ: Ծննդոց 39-ում Հովսեփը Պետափրեսի տանը ստրուկ էր: Պետափրեսի կինը փորձում էր Հովսեփին իր հետ անկողին մտցնել: Շատ հստակ էր, որ այդ կնոջ մտադրությունը Հովսեփին մեղքի մեջ ներքաշելն էր, որով Հովսեփը կխախտեր Աստծո օրենքը:

Դանիել 3-ում Սեդրաքը, Միսաքն ու Աբեդնագովը բախվեցին կռապաշտության փորձությանը: Նրանց հրամայեցին խոնարհվել և երկրպագել թագավորի պատվին պատրաստված կուռքին: Այս մարդիկ շատ հստակ հասկացան պահանջը և այն, թե ինչպես էր դա ուղղակիորեն խախտում Աստծո օրենքը: Այդ առաջնորդներին շատ քիչ էր հետաքրքրում, թե ինչ էր ասում Աստծո օրենքն ուրիշ աստվածներին երկրպագելու մասին:

3. Գուցե առաջնորդը փորձո՞ւմ է քեզ՝ տեսնելու համար, թե ինչ կանես դու:

Տե՛ս Ծննդոց 22:1-9 և Եբրայեցիներին 11:17-19: Աստված Աբրահամին ասաց, որ իր որդուն տաներ և Աստծո համար զոհաբերեր: Չնայած որ Աստծո օրենքը մեզ ասում է՝ մի՛ սպանիր: Ծննդոց 22:1-ն ասում է, որ Աստված փորձում էր Աբրահամին:

4. Քո առաջնորդը կատակո՞ւմ է:

Երբեմն առաջնորդները քեզ կհանձնարարեն կատարել մի աշխատանք, որը, սակայն, իրականում կլինի որպես կատակ, և նրանք բոլորովին էլ նկատի չեն ունենա, որ դու պարտադիր կերպով կատարես:

Գ. Եթե հիմնական պատճառը՝ թե ինչո՞ւ է քո առաջնորդը քեզ ասել, որ դա անես, քո օգուտի համար է (ոչ թե մեղք է), դու պարտավոր ես հնազանդվել:

1. Դա անելու համար փորձի՛ր մեկ այլ ձև գտնել այնպես, որ ստիպված չլինես մեղք գործել:

Համոզվի՛ր, որ մոտեցման քո նոր տարբերակը կիրականացնի քո առաջնորդի նպատակները: Դանիել 1-ին գլխում Դանիելը մեկ այլ ձև գտավ իրեն առողջ պահելու համար: Նրա ձևը չէր խախտում Աստծո ոչ մի օրենք այն դեպքում, երբ սկզբնական պատվերին հնազանդվելը կխախտեր Աստծո օրենքը: Եղի՛ր

հնարամիտ: Փորձի՛ր քո տարբերակը ինչքան հնարավոր է՝ պարզ ու հասարակ դարձնել: Աղոթի՛ր և խնդրի՛ր Տիրոջը, որպեսզի օգնի քեզ՝ գտնել մեկ այլ ձև դա անելու համար, ստեղծագործական մոտեցո՛ւմ ցուցաբերի:

2. Խոսի՛ր քո առաջնորդի հետ:

Քո առաջնորդին անպայման ցո՛ւյց տուր հնագանդ վերաբերմունք և հնագանդվելու ցանկություն: Ասա՛ նրան, որ ուզում ես իրեն օգնել՝ իր նպատակին հասնելու համար:

Քո առաջնորդին առաջարկի՛ր դա անելու քո տարբերակը: Բացատրի՛ր նրան, թե ինչու ես ուզում դա անել մեկ այլ ձևով: Ներկայացրո՛ւ նրան ողջ իրավիճակը: Մի՛ պահանջիր քո առաջնորդից, որ նա քեզ թույլ տա՝ դա անել քո ասած ձևով: Մի՛ մեղադրիր կամ քննադատիր քո առաջնորդին:

3. Ժամանա՛կ տուր Աստծուն՝ քո առաջնորդի միտքը փոխելու համար:

Եթե Աստված ուզենա, որ քո առաջնորդը փոխի իր միտքը, Նա ճնշում կգործադրի նրա վրա: Պատրա՛ստ եղիր, որ քո առաջնորդն էլ քեզ վրա ճնշում կգործադրի: Այս ճնշումը քո օգուտի համար է, որպեսզի օգնի քեզ՝ Աստծուն հաճելի բնավորության գծեր զարգացնելու նպատակով:

Դ. Եթե քո առաջնորդի կողմից հանձնարարություն տալու հիմնական պատճառը քեզ մեղքի մեջ գցելն է, դու պարտավոր ես չհնագանդվել նրան:

Մրա համար որպես օրինակ տե՛ս Դանիել 3-րդ գլուխը: Ծայրահեղ կարևոր է, որ դու հաստատ համոզված լինես, որ քո առաջնորդն իրոք ուզում է քեզ մեղք գործել տալ: Դանիել 3-րդ գլխի պատմության մեջ դու կտեսնես երեք երիտասարդների, որոնք քաջ էին, սակայն քաղաքավարի էին թագավորի հետ:

Այսօրվա դրությամբ՝ մի ասպարեզ, որտեղ ճշմարիտ քրիստոնյաները սովորաբար մեղք գործելու հանձնարարություն են ստանում, նրանց աշխատավայրն է, որտեղ ղեկավարները նրանց հանձնարարում են փոխել հաշվետվությունները, որպեսզի ամեն բան ճիշտ թվա, և աշխատանքային թերություններ չերևան: Պարզ է, որ այս պարագայում քրիստոնյային մղում են մեղք գործելու:

Նմանատիպ իրավիճակի այլ քրիստոնյաներ հանդիպում են առևտրի բնագավառում, որտեղ նրանց ղեկավարը նրանց պարտադրում է, որ, խաբելով հաճախորդին, համոզեն նրան՝ գնել ավտոմեքենա կամ վաճառքի այլ ապրանք:

1. Խոսի՛ր քո առաջնորդի հետ:

Հարգա՛նք ցույց տուր քո առաջնորդին: Հնազանդ վերաբերմո՛ւնք ցույց տուր քո նրա հանդեպ:

Հարցրո՛ւ քո առաջնորդին, թե որն է այդ հանձնարարությունը քեզ տալու հիմնական պատճառը: Ուշադի՛ր եղի՛ր, որպեսզի ճիշտ հասկանաս նրա պատասխանը: Գուցե՛ հիմնական պատճառն այլ է, քան դու կարծում ես: Գուցե՛ նրա հիմնական պատճառը քեզ մեղքի մեջ գցելը չէ:

Բացատրի՛ր քո առաջնորդին, թե ինչու ես դու մտածում, որ դա սխալ է, և ինչու դու չպետք է հնազանդվես նրա հրահանգին: Մի՛ մեղադրիր քո առաջնորդին, երբ բացատրելիս լինես նրան, թե ինչու դու չպետք է հնազանդվես:

2. Աստծուն ժամանակ տուր՝ քո առաջնորդի միտքը փոխելու համար:

Եթե Աստված ուզենա փոխել քո առաջնորդի միտքը, Նա ճնշում կգործադրի քո առաջնորդի վրա: Պատրա՛ստ եղի՛ր, որ քո առաջնորդն ավելի շատ ճնշում կգործադրի քեզ վրա: Այս ճնշումը քո օգուտի համար է: Սա կօգնի քեզ Աստծուն հաճելի բնավորության գծեր զարգացնելու հարցում:

Առակաց 21:1.

«Թագավորի սիրտը Տիրոջ ձեռքում է, ինչպես ջրի վտակները. Նա ո՛ր կողմը կամենա, այն կողմն էլ կշրջի այն»:

Սա դժվար հասկանալի համար է Աստվածաշնչում: Մեզ համար դժվար է սրան հավատալ, քանի որ մենք հաճախ ենք անհամաձայնություն ունենում մեր առաջնորդների ընդունած որոշումների հետ: «Եթե Աստված է առաջնորդում իմ ղեկավարներին, ուրեմն Աստված ինչ-որ բան շփոթում է»:

Այս համարը չի նշանակում, որ Աստված համաձայն է քո ղեկավարների ընդունած բոլոր որոշումների հետ: Սակայն այս խոստումը հստակեցնում է, որ Աստված հետևում է քո առաջնորդներին և կարող է ուղղորդել նրանց ու փոխել նրանց որոշումներն այնպես, ինչպես կարող է փոխել գետերի հոսանքի ուղղությունը:

Դժվարը քեզ համար Աստծուն սպասելն է, հնարավորություն տալը՝ Նրան՝ անելու Իր իմացած լավագույնը քեզ համար: Մենք հաճախ ենք ակնկալում ակնթարթային փոփոխություններ տեսնել ուրիշների կյանքում, սակայն դա շատ հազվադեպ է պատահում: Դրա փոխարեն մենք պետք է Աստծո ձևը փնտրենք՝ այս դժվարին իրավիճակով անցնելու համար: Նա շատ իմաստություն ունի քեզ տալու:

3. Պատրաստակա՛մ եղիր՝ ճիշտ բան անելու հետևանքներից նեղություններ կրելու համար:

Ա Պետրոս 2:20-ում մենք կարդում ենք մի քանի գործնական խորհուրդներ՝ Աստծո տեսակետից ճիշտ բաներ անելու հետևանքներից նեղություններ կրելու վերաբերյալ:

Ա Պետրոս 2:20.

«Քանզի ի՞նչ գովեստի արժանի մի բան է, եթե մեղք գործած լինելով ծեծվեք և դիմանաք: Բայց եթե բարիք գործելու համար չարչարվեք և համբերությամբ տանեք, սա ընդունելի է Աստծուն»:

Այս համարը խոսում է երկու տարբեր իրավիճակների մասին: Առաջին. նեղություն կրել վատ բան անելու համար: Երկրորդ. խոսքը Աստծո տեսակետից ճիշտ բան անելու համար նեղություն կրելու մասին է: Եթե քո առաջնորդը առարկում է փոխել իր միտքը, դու պատասխանատվություն ունես չհնագանդվելու և հետևանքները լուր կրելու:

Լուր պատժվելը հեշտ բան չէ: Դա կարող է նշանակել՝ կորցնել աշխատանքը: Հիսուսի խաչվելը լուր տառապելու լավ օրինակ է՝ ճիշտ բան անելու հետևանքների համար:

Նեղություն կրելը միշտ **քո** օգտի համար է: Ինչպե՞ս կարող է աշխատանք կորցնելը քեզ համար օգտակար լինել: Դու պետք է իրավիճակին նայես Աստծո աչքերով: Առաջին. Աստված է քո Հովանավորը: Նա կարող է այս դժվար դրությունը փոխել և օգտագործել քո լավի համար:

Աստված քեզ կարող է ավելի լավ աշխատանք տալ: Բայց եթե անգամ Նա չտա էլ, և դու մի աշխատանք գտնես, որտեղ ավելի քիչ են վարձատրում, միևնույն է, կարող ես լիակատար վստահություն ունենալ, որ Աստված քեզ հետ է: Մաքուր խղճմտանք ունենալը շատ ավելի արժեքավոր է, քան ապրել մեղքի մեջ և ունենալ բարձր աշխատավարձով աշխատանք:

Աստված ուզում է օգտագործել այս իրավիճակները՝ քո մեջ բարձր որակ զարգացնելու նպատակով, որի կարիքը դու ունես հաջողակ քրիստոնյա լինելու համար: Շատ անգամ ենք մենք նեղություններ կրում: Սակայն դա սովորաբար լինում է հետևյալ երեք պատճառներով.

1. մեր վատ վերաբերմունքների,
2. մեր հնարամտության պակասության,
3. մեր անհնագանդության:

Երբ մենք առավելագույնս աշխատում ենք հնագանդվել Աստծուն, կարող ենք վստահ լինել, որ Նա մեզ կօգնի աճել: Ծննդոց 39-ում Հովսեփը հնագանդվեց

Աստծուն, բայց բանտ ընկավ այդ քայլի համար: Սակայն նույնիսկ բանտում նա շարունակեց ծառայել Աստծուն և, վերջնական արդյունքում, Աստված հզոր կերպով օգտագործեց նրան՝ որպես Եգիպտոսի թագավորի՝ փարավոնի տեղակալ:

4. Դո՛ւ րս արի մեղքի հետ կապված իրավիճակներից:

Երբեմն մարդիկ բախվում են մեղքի հետ կապված իրավիճակների: 21 տարեկան մի աղջիկ տանն ապրում էր հոր հետ, ով նրա պատանեկան տարիներին սեռական բռնության էր ենթարկել նրան: Անգամ 21 տարին բոլորած աղջկան հայրը շարունակում էր սեռական բռնության ենթարկել: Իր դստերը սեռական բռնության ենթարկելով հանդերձ՝ նա եկեղեցում ծառայում էր որպես սարկավագ, որտեղ շատ հարգված էր:

Այդ աղջկա դաստիարակության մշակույթը, եկեղեցու և ընտանեկան ավանդույթները շատ էին արժևորում ծնողներին հնազանդվելը: Իմանալով հանդերձ, որ այն, ինչ հայրն անում է իր հետ, սխալ է, նա համարձակություն չունե՛ր՝ բացահայտելու նրա մեղքը: Թեև դիմել էր քրիստոնյա խորհրդատուի օգնությանը, սակայն պատրաստ չէր եղել կապերը խզել իր ընտանիքի հետ և պատվազրկել իր հորը:

Ի՞նչ պետք է անել՝ հայտնվելով նման իրավիճակում: Մույն գլխի քայլերը չեն վերաբերում այս տեսակի մեղքերին: Դու կարիք չունես մնալ այդ իրավիճակում և «Ժամանակ տալ Աստծուն, որ փոխի նրանց միտքը»:

Սուրբ Գիրքն այս հարցում շատ հստակ է. մեղքը պետք է բացահայտվի: Երբեք Աստծո կամքը չէ, որ ինչ-որ մեկը քեզ սեռական բռնության ենթարկի կամ ծեծի: Այդպիսի ծանր իրավիճակից դուրս գալու առաջին քայլը անմիջապես այդ վիճակից ազատվելն է: Դրանից հետո դո՛ւ պետք է քայլեր ձեռնարկես՝ հետագա բռնությունից ինքդ քեզ պաշտպանելու համար: Դու պետք է քեզ շրջապատես այնպիսի մարդկանցով, որոնք քեզ կօգնեն ապահով լինել:

Ամփոփում

Այս ամբողջ գլուխը մի շատ դժվարամարս թեմայի մասին էր: Հուսով եմ, որ դու հաճախ չես հանդիպի նմանատիպ խնդիրների: Սակայն եթե բախվես դրանց, դու պետք է աղոթես և Աստծո օգնությունը փնտրես, որպեսզի այն ձևով արձագանքես դրանց, որը պատիվ կբերեր Աստծուն:

Թե՛ Հովսեփը, թե՛ Դանիելը շատ հստակ օրինակներ են հանդիսանում, թե ինչպես դու կարող ես չհնազանդվել քո առաջնորդներին այն ձևով, որով պատիվ կբերես Աստծուն: Այս երկու մարդիկ էլ խորը փոխհարաբերություն ունեին Աստծո հետ և հնազանդվելու ցանկություն: Աստծուն հնազանդվելու փափագն էր, որ նրանց մղեց անհնազանդ լինել իրենց առաջնորդներին: Նրանց

անհնագանդությունն ըմբոստությունից չէր գալիս: Երբ նրանք անհնագանդ էին լինում իրենց առաջնորդներին, առավելագույնս հնագանդվում էին Աստծուն:

Նույնիսկ երբ շատ դժվար իրավիճակների ես հանդիպում, բայց ամեն գնով խորը նվիրվածություն ունես Աստծո հանդեպ, միևնույն է, Նա քեզ կտա զորություն և իմաստություն՝ ճիշտ որոշումներ ընդունելու համար:

Գլուխ 5.

Քո առաջնորդներին հնազանդվելու և չհնազանդվելու հետևանքները

Կարիք չկա հեռու նայել, որպեսզի տեսնես հնազանդվելու և չհնազանդվելու հետևանքները: Շատ հաճախ մենք չենք մտածում հնազանդվելու և չհնազանդվելու հետևանքների մասին, երբ հանդիպում ենք առաջնորդին չհնազանդվելու փորձությամբ: Աստվածաշունչը բազում օրինակներ է բերում, երբ մարդիկ հնազանդվել են կամ չեն հնազանդվել իրենց վրա իշխանություն ունեցողներին:

Առաջնորդներին հնազանդվելու կամ չհնազանդվելու հետևանքներն ուսումնասիրելը կարող է հզոր ազդակ դառնալ քեզ համար՝ քո առաջնորդներին հնազանդվելու հարցում: Շատ հեշտ է նայել տվյալ իրավիճակին և ասել. «Սա հիմարություն է: Ես այդպես չեմ վարվի: Ես գիտեմ, թե ինչն է ինձ համար լավ»:

Սակայն եթե դու կանգ առնես և ուսումնասիրես քո առաջնորդին հնազանդվելու և չհնազանդվելու արդյունքները, դու կարող ես տեսնել քո որոշումների հետևից ձգվող երկարատև հետևանքները: Թույլ մի՛ տուր, որ քո ներկայիս զգացմունքները քեզ թալանեն, ու դու չտեսնես հնազանդության երկարատև օգուտները և անհնազանդության կործանիչ հետևանքները:

Ա. Քո առաջնորդներին հնազանդվելու հետևանքները:

Երբ որոշում ես հնազանդվել քո առաջնորդներին, դու հաճախ տեսնում ես այս իմաստուն որոշման արդյունքները: Դու, հավանաբար, կյանքի փորձից գիտես, որ քո առաջնորդներին հնազանդվելը քո բոլոր խնդիրները չի լուծում: Առավել ևս, առաջնորդներին հնազանդվելը երբեմն դժվար գործ է և ավելի շատ խնդիրներ է առաջացնում:

Հնազանդությունը կարող է դժվար լինել սկզբում, սակայն ժամանակի ընթացքում երկարատև օգուտներն ավելի ու ավելի են ի հայտ գալիս:

1. Ինչպե՞ս է իմ հնագանդությունն անդրադառնում մարդկանց հետ իմ փոխհարաբերությունների վրա:

Հնագանդությունն անդրադառնում է իմ փոխհարաբերությունների վրա ոչ միայն այն առաջնորդի հետ, ով ինձ հանձնարարություն է տվել, այլ նաև բազմաթիվ ուրիշ անձնավորությունների: Փորձի՛ր հիշել վերջերս տեղի ունեցած մի դեպք, երբ դու հնագանդվել ես քո առաջնորդներից մեկին: Հիմա այդ դեպքի հետ կապված ինքդ քեզ հարցրո՛ւ. « Այս առաջնորդին իմ հնագանդվելն ինչպե՞ս ազդեց մյուս անձնավորությունների հետ իմ փոխհարաբերությունների վրա»:

1. Աստված
2. իմ ծնողները և ընտանիքը,
3. երեխաներս (ներկա և ապագա),
4. ընկերներս,
5. աշխատակիցներս,
6. շուրջս ապրող մարդիկ:

Մի մեծ դաս, որը դու կարող ես քո կյանքից սովորել, այն է, որ հնագանդությունը մարդկանց հետ առողջ փոխհարաբերություններ ունենալու ուղին է: Հնագանդությունը մարդկանց միջև կամուրջներ է կառուցում, մինչդեռ անհնագանդությունը խզում է մարդկանց հետ փոխհարաբերությունները: Հնագանդությունը հասունության ուղին է:

Երբ Հիսուսը դեռ փոքր էր և մեծանում էր իր ծնողների տանը, Աստվածաշունչն ասում է, որ Նա աճում էր իմաստությամբ և Աստծո ու մարդկանց առաջ շնորհ գտնելով, քանի որ ապրում էր հնագանդության մեջ:

Ղուկաս 2:51-52.

«Եվ Նա նրանց (Հովսեփի և Մարիամի) հետ իջավ ու Նազարեթ գնաց և հնագանդ էր նրանց... Եվ Հիսուսը զարգանում էր իմաստությամբ ու հասակով՝ շնորհ գտնելով Աստծո և մարդկանց առջև»:

2. Ինչպե՞ս է Աստված նայում հնագանդությանը:

Աստվածաշունչը հստակ մատնանշում է, որ մենք շատ խնդիրներից կարող ենք խուսափել, եթե հնագանդվենք մեր առաջնորդներին: Ուսուցման ուղեցույցի 7-րդ նախագծում կա կետ՝ քո առաջնորդներին հնագանդվելու արդյունքները թվարկելու համար:

Ահա մի քանի աստվածաշնչյան հատվածներ, որոնք ներկայացնում են առաջնորդներին հնազանդվելու արդյունքները.

1. Ծննդոց 24
2. Գ Թագ. 17:8-23
3. Առակաց 2:1-2
4. Առակաց 6:20-24
5. Առակաց 13:13
6. Առակաց 28:7
7. Հռոմեացիներին 13:1-6
8. Եփեսացիներին 6:1-3
9. Եփեսացիներին 6:5-8
10. Եբրայեցիներին 5:8-9, Եբրայեցիներին 13:17
11. Ա Պետրոս 2:13-17

Աստվածաշնչում շատ կան համարներ, որոնք մեզ նույն բանն են սովորեցնում: Աստված մեծ նշանակություն է տալիս մեր առաջնորդներին հնազանդվելու դասը սովորելուն: Աստվածաշունչը նաև հստակորեն ցույց է տալիս, որ Աստված խոստանում է օրհնել մեզ, եթե մենք հնազանդվենք մեր առաջնորդներին:

3. Ինչպե՞ս է հնազանդությունը փոխում իմ կյանքը:

Եթե դու հնազանդ վերաբերմունքներ զարգացնես, որի մասին մենք խոսեցինք 1-ին գլխում, դա կօգնի քեզ՝ հնազանդվել քո առաջնորդներին: Հնազանդ արարքներն օգնում են քեզ, որ փոխես քո կենսակերպը: Հնազանդությունն օգնում է քո կյանքում բնավորության դրական որակներ զարգացնել: Ավելի հանգամանորեն դիտարկենք դրանցից երկուսը՝ ինքնակառավարում և վստահություն:

Ա. Չարգացնել ինքնակառավարում:

2-րդ գլխում մենք խոսեցինք հնազանդության երեք մակարդակների մասին: Եթե դու աշխատես այս երեք մակարդակները դարձնել քո առօրյա կյանքի անբաժանելի մասը, դու կսկսես աճել ինքնակառավարման ասպարեզում: Դու որոշում ես ճիշտ բաներ անել քո կամքով՝ ոչ թե միայն ցավոտ պատժից խուսափելու համար, այլ որովհետև դու գիտես, որ այդպես վարվելը ճիշտ է: Դու գիտես, որ հնազանդությունը հաճելի է Աստծուն:

Հնագանդության երեք մակարդակները

1. Հնագանդվի՛ր, քանի որ քեզ ասել են, որ անես դա:
2. Հնագանդվի՛ր և պարզի՛ր հիմնական պատճառը, թե ինչո՛ւ է քո առաջնորդը քեզ ասել, որ դա անես:
3. Հնագանդվի՛ր քո կամքով, քանի որ այդպես վարվելը ճիշտ է:

Ինքնակառավարումն այն սահմանների մեջ ապրելն է, որը դու և քո առաջնորդը դրել եք քեզ համար: Ինչքան շատ ինքնակառավարում զարգացնես, այնքան հեշտությամբ կկարողանաս դեմ կանգնել մեղքի փորձություններին:

Բ. Չարգացնել վստահություն:

Հնագանդությունը մեզ օգնում է վստահություն զարգացնել: Եթե դու սովորում ես Աստծո հանդեպ վստահություն զարգացնել, Նա կօգտագործի առաջնորդիդ հանդեպ քո վստահությունը՝ քեզ օգնելու համար, որպեսզի սովորես, թե ինչպես կարող ես դառնալ Նրա ուզած անձնավորությունը:

Վստահությունը քեզ օգնում է աճել և հասնել մի աստիճանի, երբ կարող ես ասել. «Ես կարողանում եմ վստահել իմ առաջնորդներին, քանի որ վստահում եմ Աստծուն»: Մա կույր վստահություն չէ: Սակայն սա չափավոր վստահություն է: Դու դեռևս կարիք ունես գալ Աստծո մոտ՝ խոհեմություն ստանալու, թե ինչպես վերաբերվես քո առաջնորդներին: Երբ նրանք թերանում են կամ սխալներ են թույլ տալիս, ինչպե՞ս կարող ես լավագույն կերպով շփվել նրանց հետ:

Եթե անգամ դժվարություններ ես ունենում քո առաջնորդների թույլ տված թերությունների կամ սխալների պատճառով, դու կարող ես վստահել Աստծուն, որ Նա չի սխալվել թույլ տալով, որ հանդիպես նման իրավիճակների: Երբ հնագանդվում ես քո առաջնորդներին և շարունակում աճել, դու կարող ես սովորել վստահել քո առաջնորդներին այնպես, ինչպես Աստված է ուզում, որ վստահես նրանց:

Բ. Քո առաջնորդներին չհնագանդվելու հետևանքները:

Անհնագանդությունը շատ հեշտ է արդարացնել, հատկապես եթե դա անողը դու ես: Միգուցե դու մտածել ես, որ դա անմիտ կանոն է, կամ համոզված էիր, որ քո առաջնորդն ազնիվ չէ: Դու, հավանաբար, կարող ես բազմաթիվ պատճառաբանություններ բերել՝ ինչպես որ մարդիկ սովորաբար անում են չհնագանդվելու դեպքում: Բայց և այնպես, այս բոլոր պատճառաբանությունները

չեն փոխում այն փաստը, որ դա իրականում անհնազանդ քայլ էր: Մենք արդեն քննարկել ենք այն հազվադեպ դեպքերը, երբ մեր առաջնորդները մեզ այնպիսի հանձնարարություն են տալիս, որը խախտում է Աստծո օրենքը:

Քո առաջնորդների սահմանած կանոններին ու օրենքներին չհնազանդվելու արդյունքները, սովորաբար, շատ հստակ են: Երբեմն արդյունքներն անմիջապես են հետևում, հատկապես, երբ ճանապարհային տեսուչները հետևում են, որպեսզի մարդիկ կարմիր լույսի տակ չանցնեն:

Երբ արդյունքներն անմիջապես չեն հետևում, մարդիկ իրենք իրենց խաբում են՝ մտածելով, որ կարող են անհնազանդ վարք ցույց տալ և հաջողությամբ ավարտել: Որոշ մարդիկ չեն կրում իրենց անհնազանդության հետևանքները:

Աստված հստակ հայտնում է մեզ, որ չի անտեսում մեր անհնազանդ վարքը: Եթե մեղքի պատիժը չկա այս կյանքում, միևնույն է, տվյալ անձնավորությունը հանդիպելու է Աստծո դատաստանին հանդերձյալ կյանքում:

1. Որո՞նք են անհնազանդության հետևանքները:

Անհնազանդ արարքները, սովորաբար, ունենում են չորս տարբեր տեսակի հետևանքներ: Մենք ուշադիր կզննենք դրանցից ամեն մեկը, որպեսզի տեսնենք, թե ինչ ձևով է դրանցից յուրաքանչյուրը կապված անհնազանդության հետ:

Ա. Բնական հետևանքներ:

Ծնողը երեխային ասում է. «Վառարանին մի՛ դիպչիր: Այն շատ տաք է»: Եթե երեխան չլսի ու դիպչի վառարանին, տվյալ անհնազանդ քայլի **բնական հետևանքը** կլինի այն, որ նա, ամենայն հավանականությամբ, կվառի իր մատը:

Բնական հետևանքները տվյալ արարքի բնական (ինքնըստինքյան տեղի ունեցող) արդյունքներն են: Այս արդյունքները նույնը չեն, ինչ որ դաստիարակությունն ու պատիժն են: Քո առաջնորդներին չլսելը միշտ էլ հետևանքներ է ունենում: Դու, հնարավոր է, ամեն անգամ չբռնվես, երբ անհնազանդ ես լինում քո առաջնորդներին, սակայն քո անհնազանդության պատճառով միշտ էլ կլինեն հետևանքներ:

Անհնազանդության լուրջ հետևանքներից մեկն այն է, որ քեզ մոտ սովորության կարգով կսկսեն ձևավորվել անհնազանդ վերաբերմունքներ քո առաջնորդների հանդեպ: Այս անհնազանդ վերաբերմունքները կդժվարացնեն քո առաջնորդներին հնազանդվելը նաև ապագա իրավիճակներում: Տե՛ս Գաղատացիներին 6:7-10:

Բ. Դաստիարակություն:

Շատ անգամ, երբ դու անհնազանդ ես լինում քո առաջնորդներին, նրանք դաստիարակում են քեզ: *Դաստիարակելը* ենթադրում է խնդրի ուղղում: Դաստիարակության նպատակը քեզ օգնելն է, որպեսզի ճիշտ ապրես, այսինքն՝ որոշես հնագանդվել, երբ հաջորդ անգամ հանդիպես նույն իրավիճակին: Եբրայեցիներին 12:7-11-ը բացատրում է պատճառները, թե ինչու են քո առաջնորդները դաստիարակում քեզ:

Եբրայեցիներին 12:7-11.

«Եթե խրատին դիմանաք, Աստված ձեզ հետ կվարվի՝ ինչպես որդիների հետ, որովհետև այդ ո՞ր զավակին է, որ հայրը չի խրատում: Իսկ եթե առանց խրատի լինեք, որին բոլորը մասնակից են, ուրեմն դուք խորթ եք, ո՛չ թե որդիներ: Ավելին, մենք մարմնավոր հայրեր ունենք, որոնք մեզ ուղղում են, և մենք նրանց հարգում ենք. ուրեմն որքա՛ն ավելի պետք է հնագանդվենք հոգիների Հորը և ապրենք: Որովհետև նրանք իրապես մի քանի օրվա համար են մեզ խրատում՝ իրենց լավագույն համարած ձևով, իսկ Նա՝ մեր բարիքի համար, որպեսզի Իր սրբությանը հաղորդակից դառնանք: Ճիշտ է, ո՛չ մի խրատ նույն պահին ուրախությամբ չի ընդունվում, այլ՝ տրտմությամբ. սակայն հետագայում նրանով կրթվածներին արդարության խաղաղարար պտուղն է տալիս»:

Աստվածաշնչյան որոշ թարգմանություններ դաստիարակությունն բառի փոխարենն օգտագործում են «պատիժ» բառը: Նման դեպքերում, թարգմանիչը խիստ տարբերություն է դնում պատժի և դաստիարակության միջև, ինչպես մենք ենք անում այս դասում: Շատ դեպքերում պատիժ բառն օգտագործվում է ավելի ընդարձակ իմաստով՝ իր մեջ ներառելով ցանկացած տիպի դաստիարակություն կամ հանդիմանություն:

Դաստիարակությունն իր մեջ հույսի տարր է կրում: Դաստիարակությունը տրվում է այն հույսով, որ այն դրական փոփոխություններ կբերի անհնազանդ մարդու կյանքում: Ինչ տեսակի դաստիարակություն էլ օգտագործվի, այն անպայման պետք է ազդի մարդու վրա՝ ճիշտ կյանք ապրելու վերաբերյալ ավելի լավ հասկացողություն բերելու համար:

Ինչքան շուտ սովորես դաստիարակության դասը, այնքան կհեշտանա քո կյանքը: Անհնազանդությունը քեզ տանում է կործանման ճանապարհով: Դաստիարակության նպատակն է՝ քեզ հետ բերել ճիշտ ուղուն՝ իրական կյանք տանող ուղուն:

Գ. Պատիժ:

Պատիժը, ինչպիսին որ մենք այն սահմանում ենք այստեղ, իր մեջ կրում է որոշ ցավոտ փորձությունների գաղափար, որոնք գալիս են մարդկանց կյանքում, որպեսզի պատժեն նրանց իրենց անհնազանդ արարքների համար: Պատիժն իր

մեջ կրում է այն գաղափարը, որ եթե դու չես հնազանդվում քո առաջնորդներին, ապա պետք է կրես քո արարքների հետևանքները:

Պատիժը միշտ չէ, որ հետապնդում է ուղղելու նպատակ: Այն նաև կենտրոնանում է քո արած սխալի համար հատուցելու վրա: Պատժի նպատակներից մեկը քեզ այնքան ցավ պատճառելն է, որ դու դադարես առաջ տանել քո անհնազանդ վարքը:

Պատիժը միշտ չէ, որ ներառում է ուսուցում՝ ինչպես լինել հնազանդ: Դա դաստիարակության առաջնային խնդիրն է: Պատիժը խարսխվում է այն սկզբունքի վրա, ըստ որի՝ «ցավը մղում է փոփոխության»:

Մեր հասարակության մեջ քեզ կարող են տուգանել որոշակի օրենքներ խախտելու համար, օրինակ, եթե խախտես ճանապարհային կանոնները: Անհնազանդության այլ արարքներ կարող են ունենալ շատ ավելի լուրջ պատիժներ, ներառյալ՝ բանտարկություն:

Դ. Վրեժխնդրություն:

Վրեժխնդրությունը կենտրոնանում է սխալ արած մարդուն իր հասանելիքը վերադարձնելու վրա: Եթե Գևորգը ծեծել է քո փոքրիկ եղբորը, ապա դու պետք է ծեծես նրան, կամ քո ընկերներին ասես, որ ծեծեն նրան: Վրեժխնդրությունը սխալ արած մարդուն պատժելու պատասխանատվությունը քո ձեռքերի մեջ վերցնելն է:

Վրեժխնդրությունն անտեսում է իշխանությունների հետ ճիշտ փոխհարաբերությունը և առաջնորդների պատասխանատվությունը՝ տեսնելու համար, թե արդյոք անհնազանդություն թույլ տված անձնավորությունը ստացել է իր համապատասխան դաստիարակությունը: Հռոմեացիներին 12:17-21-ը մեզ ասում է, թե ինչ պետք է անի քրիստոնյան վրեժխնդրության առումով: Աստված ասում է. «Իմն է վրեժխնդրությունը»:

Հռոմեացիներին 12:17-21.

«Ոչ մեկին չարը չարով մի՛ հատուցեք: Բոլոր մարդկանց առջև բարի խորհո՛ւրդ ունեցեք: Եթե հնարավոր է (որքան ձեզանից է կախված)՝ բոլոր մարդկանց հետ խաղաղությա՛ մբ ապրեցեք: Միրելի՛նե՛ք, ձեր անձերի համար վրեժխնդիր մի՛ եղեք, այլ տե՛ղ տվեք բարկությանը. որովհետև գրված է. «Վրեժխնդրությունն Իմն է, Ե՛ս պիտի հատուցեմ», - ասում է Տերը: Դրա համար, եթե թշնամիդ քաղցած է, կերակրի՛ր նրան, եթե ծարավ է, ջո՛ւր տուր նրան, որովհետև այսպես անելով՝ կրակի ածուխներ կդիզես նրա վրա: Չարից մի՛ պարտվիր, այլ չարը բարիո՛ւ վ հաղթիր»:

Երբ դու վրեժխնդիր ես լինում այն մարդուց, ով սխալ արարք է թույլ տվել, դու անում ես մի բան, որ միայն Աստված իրավունք ունի անել նման իրավիճակում: Քեզ համար կարող է շատ դժվար լինել այդ ցավալի իրավիճակները դնել Աստծո

ձեռքերի մեջ և ասել. «Տե՛ր, ես Քեզ եմ հանձնում այս մարդուց վրեժ լուծելու իմ իրավունքը»:

2. Ինչպե՞ս է իմ անհնազանդությունն ազդում մարդկանց հետ իմ փոխհարաբերությունների վրա:

Անհնազանդությունն ազդում է ոչ միայն այն առաջնորդի, ով քեզ հանձնարարություն է տվել, այլ նաև բազմաթիվ մարդկանց հետ քո փոխհարաբերությունների վրա: Շատ անգամ մենք չենք էլ մտածում, թե ինչպես կարող է մեր անհնազանդությունն ազդել մյուսների վրա: Փորձի՛ր հիշել, թե երբ ես վերջերս անհնազանդ եղել քո առաջնորդներից որևէ մեկի հանդեպ: Այնուհետև, այդ իրավիճակի հետ կապված, տո՛ւր այս հարցը. «Ինչպե՞ս է իմ անհնազանդ վարքն ազդեց ստորև նշված անձնավորությունների հետ իմ փոխհարաբերությունների վրա».

1. Աստված,
2. իմ ծնողներն ու ընտանիքը,
3. երեխաներս (ներկա և ապագա),
4. ընկերներս,
5. աշխատակիցներս,
6. շուրջս ապրող մարդիկ:

Երբ դու մտածում ես, որ քո առաջնորդներին չհնազանդվելը նորմալ է, դու ընթացքի մեջ ես դնում մի շարք արձագանքներ: Անհնազանդությունը հաճախ ձգանի դեր է կատարում բազմաթիվ բախումների համար: Երբ անհնազանդությունը շատ բախումներ է բերում փոխհարաբերությունների մեջ, այն հաճախ բերում է այդ փոխհարաբերությունների խզման, հատկապես, երբ դու մերժում ես ընդունել, որ քո անհնազանդությունը սխալ էր:

3. Ինչպե՞ս է Աստված նայում անհնազանդությանը:

Աստվածաշունչը մի շարք օրինակներ է բերում, թե ինչ տեղի ունեցավ, երբ մարդիկ չհնազանդվեցին իրենց առաջնորդներին: Քո Ուսուցման ուղեցույցի 8-րդ նախագծում ասվում է, որ քո առաջնորդներին չհնազանդվելու հետևանքներ թվարկես: Ահա մի քանի աստվածաշնչյան համարներ, որոնք խոսում են անհնազանդության հետևանքների մասին.

1. Ծննդոց 39
2. Ա Թագավորաց 13 և 14
3. Առակաց 13:13

4. Առակաց 5:12-14
5. Առակաց 15:9-10
6. Գործք 5:17-41
7. Հռոմեացիներին 13:1-6
8. Բ Կորնթացիներին 10:6
9. Ա Պետրոս 2:13-17

Ուրիշ ի՞նչ պատմություններ և համարներ ես դու գտել Աստվածաշնչում, որոնք խոսում են անհնազանդության վերաբերյալ: Այդ համարները գրի բ, բացի արդեն վերը նշվածները:

Աստված հստակ ասում է, որ երբ մենք չենք լսում մեր առաջնորդներին, իրականում անհնազանդ ենք լինում Աստծուն: Մենք 4-րդ գլխում արդեն անդրադարձանք մի քանի հազվադեպ բացառությունների:

Անհնազանդությունը հոգևոր կուրություն է ծնում: Մեր անհնազանդ արարքները հաճախ ծպտված են մի մտածելակերպի տակ, որն ասում է. «Ես ավելի լավ գիտեմ, թե ինչն է ինձ համար լավագույնը: Ոչ ոք չի կարող ինձ ստիպել, որ այս անմիտ բանն անեմ»:

Դու մեջքով ես շրջվում Աստծուն, երբ չես հնազանդվում քո առաջնորդներին: Դու գնում ես խավարի ու անկայունության ուղիով: Եթե կանգ չառնես, անհնազանդությունը քեզ կտանի կործանման: Դու պետք է խորը ինքնաքննություն անես և ինքդ քեզ հարցնես. «Արդյո՞ք ես թույլ եմ տալիս, որ կամակոր վերաբերմունքն իմ կյանքում ինձ խանգարի՝ Աստծո լավագույնն ինձ համար տեսնելու հարցում»:

4. Դաստիարակության և պատժի կարիքն այսօր:

Հնազանդության վերաբերյալ այս գիրքը կարդալն ինքնաբերաբար չի փոխի քո կյանքը: Մենք դիտարկեցինք, թե ինչպես կարող ես դու հնազանդվել քո առաջնորդներին: Մենք քննարկեցինք քո առաջնորդներին հնազանդվելու օգուտները և չհնազանդվելու բացասական հետևանքները:

Սակայն հնազանդության այս թեման ընդամենը տեսություն չէ: Մենք բոլորս էլ հանդիպում ենք իրավիճակների (գրեթե ամեն օր, երբ ստիպված ենք լինում որոշում ընդունել), թե արդյո՞ք հնազանդվենք, թե՞ չհնազանդվենք: Այս դասը կիրառելու համար մենք կարիք չունենք վեց ամիս կամ մեկ տարի սպասել: Դա կիրառելու հնարավորությունները, շատ հավանական է, որ գան հետագա մի քանի ժամվա ընթացքում, եթե ոչ՝ ավելի շուտ:

Մեզնից շատերը ժամանակ առ ժամանակ դեռևս պայքարում են հնագանդության հետ: Քո անհնագանդ արարքները բացահայտում են քո կարիքը դաստիարակություն ստանալու հարցում: Աստված առաջնորդներ է դրել քո կյանքում, և նրանց պարտականություններից մեկը քեզ դաստիարակելն է, երբ դու չես հնագանդվում: Որոշ առաջնորդներ կարող են անտեսել Աստծուց տրված իրենց պատասխանատվությունը և չդաստիարակեն քեզ: Մինչդեռ մյուսներն էլ կարող են չափն անցնել և այնպես պատժել, որ Աստծուն դուր չգա:

Այսպիսով, երբ քեզ դաստիարակում են կամ պատժում, Աստված քեզ առիթ է տալիս փոխվելու՝ աճելու: Ընտրությունը քոնն է: Ինչպե՞ս դու կարձագանքես:

Եբրայեցիներին 12:11.

«Ճիշտ է, ո՛չ մի խրատ նույն պահին ուրախությամբ չի ընդունվում, այլ՝ տրտմությամբ. սակայն հետագայում նրանով կրթվածներին արդարության խաղաղարար պտուղն է տալիս»:

Դաստիարակության ո՞ր մեթոդներն ամենաօգտակարը կլինեն քեզ համար: Մա մի հարց է, որին կդժվարանան պատասխանել առաջնորդների մեծ մասը: Ինչպե՞ս կարող են նրանք դաստիարակել, որպեսզի օգնեն քեզ՝ Աստծո ուզած դրական փոփոխություններ բերելու քո կյանքում:

Եթե դու արդեն առաջնորդական դիրքի մեջ ես և պարտավորություն ունես ուրիշներին դաստիարակելու (երեխաներիդ, աշխատակիցներիդ և այլն), ապա քո պատասխանատվություններն ավելանում են: Ինչպե՞ս կարող ես այդ մարդկանց դաստիարակել Աստծուն պատիվ բերող ձևով:

Մի բան հստակ է. դաստիարակությունը տարիներ շարունակ կլինի քո կյանքի անբաժանելի մասը, քանի որ մենք բոլորս էլ չհնագանդվելու նոր առիթներ կունենանք: Ցավոք, մեզնից շատերը չեն կարողանա բավարարել հնագանդության Աստծո չափանիշը և կարիք կունենան դաստիարակվելու:

Եզրակացություն

Քո առաջնորդներին հնագանդվելը, հնարավոր է, կյանքիդ ամենադժվար դասը լինի սովորելու համար: Բայց և այնպես, ինչքան շուտ հնագանդությունը դարձնես քո կյանքի անբաժանելի մասը, այնքան շուտ կվայելես հնագանդության հետևանք հանդիսացող օգուտները:

Հնագանդությունը մեծ դեր ունի քո աճի հարցում, որ դու դառնաս Աստծո ուզած հասուն անձնավորությունը: Քո կյանքում պայքարներ են եղել և, գուցե, դեռևս շարունակվում են: Հնագանդվելու կամ չհնագանդվելու որոշումը կարող է ամենօրյա պայքար լինել քեզ համար:

Հնագանդության այս երեք մակարդակները քո կյանքում ներդնելով՝ դու կարող ես համոզված լինել, որ մի ճանապարհի վրա ես, որը քեզ կտանի ավելի մեծ խաղաղության: Մա նաև մարդկանց հետ ավելի լավ փոխհարաբերությունների ճանապարհն է: Մի՛ համաձայնվիր ավելի քչի հետ՝ քան Աստծո լավագույնն է քեզ համար: